Պայքարի փորձ[եր]

ՀՏԴ 316.42
ԳՄԴ 60.5
Պ 199

հեղինակներ՝ Վահրամ Սողոմոնյան, Արփի Մանուսյան, Նարինե Խաչատրյան, Սոնա Մանուսյան, Արմինե Իշխանյան, Իգոր Բլաժևիչ
խմբագրակազմ՝ Աննա Ժամակոչյան, Արփի Մանուսյան, Ժաննա Անդրեասյան

թարգմանիչներ՝ Արաքսյա Հակոբյան, Էվելինա Գյուլխանդանյան
սրբագրիչ՝ Ալետա Հակոբյան
գրաֆիկական ձևավորող՝ Լուսինե Նավասարդյան
շապիկի դիմերեսի լուսանկարը՝ Վահան Ստեփանյան / PAN Photo
շապիկի դարձերեսի լուսանկարը՝ Անուշ Բաբաջանյան / 4 Plus

Պ 199 | Պայքարի փորձ[եր].- Եր.: Սոցիոսկոպ ՀԿ, 2016.- 86 էջ:

ՀՏԴ 316.42
ԳՄԴ 60.5

«Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն ՀԿ
"Socioscope" Societal Research and Consultancy Center NGO

Ժողովրդավարության ազգային հիմնադրամ
National Endowment for Democracy

ISBN 978-9939-1-0461-4

Սոցիոսկոպ ՀԿ, 2016

Բովանդակությունը օգտագործելի և տարածելի է միմիայն Սոցիոսկոպ ՀԿ-ի և հեղինակի անունը նշելու և հղում կատարելու պարտադիր պայմանով և ոչ առևտրային նպատակներով:

Միքայել Դանիելյանին

Այս ժողովածուի հրատարակման գործում առաջին հերթին նշանակալի է հեղինակների ներդրումը, ինչի համար Սոցիոսկոպ ՀԿ թիմը շնորհակալ է նրանց: Մասնավորապես Վահրամ Սողոմոնյանը, Արփի Մանուսյանը, Նարինե Խաչատրյանը և Սոնա Մանուսյանը սիրով համաձայնել են խմբագրել իրենց բանախոսությունների հիման վրա կազմված հոդվածները, իսկ Արմինե Իշխանյանը և Իգոր Բլաժևիչը բարեկամաբար Սոցիոսկոպին են տրամադրել իրենց հոդվածները թարգմանելու իրավունքը:

Թարգմանության համար շնորհակալ ենք Էվելինա Գյուլխանդանյանին և Արաքսյա Հակոբյանին:

Շապիկի լուսանկարների օգտագործման իրավունքի տրամադրման համար շնորհակալ ենք լուսանկարիչներ Անուշ Բաբաջանյանին և Վահան Ստեփանյանին, ինչպես նաև դիմերեսի լուսանկարում արձանագրված անձանց:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև Սոցիոսկոպի բոլոր այն բարեկամներին և աջակիցներին, ում օգնությամբ հնարավոր է դարձել ժողովածուի հրատարակումը:

Բովանդակություն

ԳՐՔԻ ՄԱՍԻՆ 1

խմբագրության կողմից

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

1 Հայաստանը կապիտալիզմի ճգնաժամի պայմաններում. հեգեմոնիա և կոշտ խնայողություն 7

Վահրամ Սողոմոնյան

ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐ

2 Իրավապաշտպան պայքարի սկզբունքները. 1970-1980-ականների խորհրդային փորձառությունը 23

Արփի Մանուսյան

ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՈՒՄ ԵՎ ԱԿՏԻՎԻԶՄ

3 Արժեքները և փոփոխության հնարավորությունը Հայաստանի հասարակությունում 35

Նարինե Խաչատրյան

4 Արժեքային և ինքնության կողմնորոշումները Հայաստանում՝ ակտիվիզմի հետ առնչության մեջ 45

Սոնա Մանուսյան

5 Ինքնորոշվա՞ծ քաղաքացիներ. քաղաքացիական ակտիվիզմի նոր ալիքը Հայաստանում 65

Արմինե Իշխանյան

ՈՒՐԻՇԻ ՓՈՐՁԸ

6 Ծայրահեղ ազգայնականության արատավոր շրջանը 77

Իգոր Բլաժևիչ

ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Գրքի նպատակն է խոսել Հայաստանի արդիական հարցերի մասին գիտակարգային տեսանկյուններից և աշխարհում ընթացող գործընթացների հետ առնչությունների մեջ: Այն հոդվածների ժողովածու է, որում ներառված են հանրային բանախոսությունների շարքի հիման վրա ձևավորված հոդվածներ և երկու թարգմանություններ:

Բանախոսությունները կազմակերպվել են Սոցիոսկոպ ՀԿ ջանքերով 2015 թ. մարտ-մայիս ամիսներին «Հասարակագիտական տեսություն և պրակտիկա՝ հանուն քաղաքացիական հասարակության զորացման» ծրագրի[1] շրջանակներում: Դրանք Հայաստանի արդիական խնդիրներին նվիրված հետազոտությունների ներկայացումներ էին, որոնց նպատակը հետազոտողների և քաղաքացիական-քաղաքական գործընթացներում ներգրավված մարդկանց՝ ակտիվիստների միջև քննարկումների դաշտ բացելն էր: Ելնելով հոդվածների նախնական նյութից՝ մենք խմբագրելիս պահպանել ենք բանախոսությունների կենդանի խոսքի անմիջականությունը և պարզությունը՝ միաժամանակ պահպանելով տեսաբանական և գործնական հարցերի լուրջ քննարկումը: Բանախոսները ներկայացնում են իրենց ասելիքի գիտակարգային կամ փորձառական շրջանակը, տալիս գործածած հասկացությունների սահմանումները և անդրադառնում խնդիրների մասին մտածելու իրենց ուղիներին:

Մասնավորապես ներկայացված են քաղաքացիական նախաձեռնությունների ակտիվ մասնակից Վահրամ Սողոմոնյանի, հետազոտողներ Արփի Մանուսյանի, Նարինե Խաչատրյանի և Սոնա Մանուսյանի հոդվածները: Յուրաքանչյուր հոդվածին հաջորդում են դրանում արծարծված հարցերի շուրջ գրականության ցանկ և տեղեկատվական հղումներ, որոնք ուղենիշ կլինեն թեման առավել խորը հասկանալու ցանկություն ունեցողներին: Ներկայացված բանախոսություններն ինքնին Հայաստանի հանրային կյանքի խնդիրները ներսից հասկանալու և դրանց հաղթահարմանը սեփական մոտեցումներով մասնակցելու փորձեր են, որոնք ստեղծում են նաև այլոց ակտիվության և մասնակցության հնարավորություններ:

Թարգմանաբար ներկայացված հոդվածները երկուսն են, որոնք արտաքին հայացք են աշխարհում տարածված գործընթացների հանդեպ՝ Արմինե Իշխանյանի դեպքում անմիջական առնչվելով

[1] *Ծրագրի բոլոր բանախոսությունների տեսաշարերը հասանելի են socioscope.am կայքում:*

Հայաստանի ակտիվիստական ալիքների հետազոտմանը, իսկ Իգոր Բլաժևիչի դեպքում նախկին Հարավսլավիայի և Բիրմայի օրինակով արժեքավոր փորձ ներկայացնելով համընդհանուր, ինչպես և Հայաստանում խիստ արդիական խնդրի՝ իշխանական հարաբերություններում ազգայնականության չարաշահման մասին: Հոդվածները բնագրով՝ անգլերենով, հասանելի են համացանցում, սակայն հայերեն թարգմանությամբ ներկայացվում են առաջին անգամ: Ժողովածուի հոդվածները տարբերվող՝ ակադեմիական և ակտիվիստական (կամ դրանք համադրող) փորձառությամբ հեղինակների առանձին աշխատանքներ են, սակայն կապվում են թեմատիկ հաջորդականությամբ և գրքի ասելիքի ընդհանուր նպատակով՝ Հայաստանի հիմնախնդիրներին գիտական և գործնական մոտեցումներ ցույց տալու ցանկությամբ: Հետևաբար հետաքրքրված ընթերցողը կգտնի հոդվածների՝ միմյանց փոխլրացնելու և տարբեր կողմերից հարցեր հնչեցնելու, ինչպես նաև պատասխաններ գտնելու հնարավորությունը: Ամեն հոդվածի նախորդում են ծանոթագրություններ հեղինակի փորձառության և հոդվածի հիմնական ասելիքի մասին:

Ժողովածուն կարող է հետաքրքրել Հայաստանի հանրային կյանքի արդիական հարցերով հետաքրքրված, դրանք լայն համատեքստում և բազմակողմանի դիտարկելու ցանկություն ունեցող, հանրային և քաղաքական կյանքում ակտիվ մարդկանց, սոցիալական և հումանիտար գիտնականներին, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակի:

Խմբագրության կողմից

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Վահրամ Սողոմոնյան

Վահրամ Սողոմոնյանն ավարտել է ԵՊՀ գերմաներենի բաժինը: 2007 թ. պաշտպանել է քաղաքագիտական դոկտորական աշխատանք Մարբուրգի Ֆիլիպս համալսարանում: Գրել է գիտական աշխատանքներ ինտեգրացիոն գործընթացների, արժեհամակարգային հարցերի և արցախյան հիմնախնդրի մասին: Մասնակցել է մի շարք քաղաքացիական նախաձեռնությունների (Մենք ենք այս քաղաքի տերը, Մաշտոցի պուրակ և այլն):

Վ. Սողոմոնյանն իր տեքստում փորձել է համատեղել 20-րդ դարի քաղաքագիտական տեսական գիտելիքները և կապիտալիզմի ընդհանուր զարգացման տրամաբանությունը՝ դրանք դիտարկելով Հայաստանում տեղի ունեցող զարգացումների համատեքստում:

Հայաստանը կապիտալիզմի ճգնաժամի պայմաններում. հեգեմոնիա և կոշտ խնայողություն

Հեգեմոնիայի էությունը

Հեգեմոնիա (հունարեն՝ ἡγεμονία hēgemonía) հասկացությունը անտիկ ժամանակներում օգտագործվել է քաղաք-պետությունների միջև գերիշխանության կամ իշխանական հարաբերությունները բնութագրելու նպատակով: 20-րդ դարի սկզբում իտալացի քաղաքագետ Անտոնիո Գրամշին[1] վերաիմաստավորեց այս հասկացությունը և այն բնութագրեց որպես մշակութային ֆենոմեն՝ քաղաքական տիրապետության մի ձև, որի դեպքում հաջողվում է սեփական շահը ներկայացնել իբրև հանրային շահ: Եթե որևէ քաղաքական խմբավորում կամ սոցիալական դասակարգ հաջողում է իր սեփական աշխարհայացքային պատկերացումները փոխադրել ողջախոհության ընդհանուր պատկերացումների մեջ, այդ դեպքում կարելի է ասել, որ այն հասնում է հեգեմոնիայի: Հեգեմոնիան, ի տարբերություն գերիշխանության կամ տիրապետության մյուս ձևերի, ունի համաձայնության տարր: Այսինքն՝ այն ենթադրում է, որ ենթարկվողները համաձայն են հեգեմոնիայի՝ տիրապետության տվյալ ձևի հետ: Հեգեմոնիան, սակայն, պետք է անընդհատ նվաճել և վերանվաճել, իսկ վերանվաճման կամ հեգեմոնիայի վերահաստատման համար պայքարի դաշտը, ըստ Գրամշիի, քաղաքացիական հասարակությունն է: Քաղաքացիական հասարակություն ասելով՝ Գրամշին հասկանում էր հիմնականում ոչ պետական հատվածի կառույցները, այսինքն՝ կրթության ոլորտը, մեդիան, եկեղեցին և մյուս կազմակերպությունները, որոնց միջոցով էլ իշխողները վերարտադրում են իրենց գերիշխանությունը: 20-րդ դարում տարբեր տեսաբանների կողմից զարգացում ստացավ նեոգրամշիականությունը, որը, ի տարբերություն Գրամշիի ավանդական տեսության, տարածվեց նաև միջազգային հարաբերությունների ոլորտի վրա: Դրա շրջանակներում ավելի շատ քննվում են աշխարհակարգի և դրա հետ կապված արտադրական հարաբերությունների, պետությունների, դրանց ձևերի հարցերը:

Հեգեմոնիկ նախագծեր և կապիտալիզմի ցիկլային ճգնաժամեր

Միջազգային հարաբերությունների մակարդակում տեսաբանները խոսում են հեգեմոնիկ տարբեր նախագծերի մասին:

[1] *Գրամշին հայտնի է ոչ միայն իբրև մարքսիստ տեսաբան, այլև՝ իր ժամանակի ակտիվ քաղաքական գործիչ: Եղել է երկրորդ ինտերնացիոնալի անդամ, հիմնադրել է իտալական կոմունիստական կուսակցությունը: Իր քաղաքական դիրքորոշումների համար բանտարկվել է Մուսոլինիի ֆաշիստական վարչակարգի կողմից, որտեղ էլ գրել է իր հիմնական աշխատությունները:*

Դրանցից ամենակարևորներից մեկը «նեոլիբերալ հեգեմոնիայի» նախագիծն է, որը կապիտալիզմի մի ձև է՝ հենված հետևյալ երեք գործընթացների վրա՝ *մասնավորեցում, ապակարգավորում, ազատականացում:*

Այս նախագծի սկիզբը դրվեց 1970-ական թվականներին՝ Բրետոն-Վուդյան[2] համակարգի փլուզմանը զուգընթաց: Այնուհետև նեոլիբերալ քաղաքականությունը հաջողությամբ իրականացվում էր մի քանի տասնամյակ: 1980-1990-ականներին այն էլ ավելի գլոբալացավ և զարգացում ապրեց: ԽՍՀՄ փլուզումով նախկին սոցիալիստական երկրների տնտեսությունները նեոլիբերալ քաղաքականության համար հարուստ դաշտ հանդիսացան: Ինչպես հետագայում պարզվեց, նեոլիբերալ կապիտալիզմը 2008 թ. թևակոխեց իր հերթական ճգնաժամի փուլ, և այսօր այն լուրջ քննադատության տակ է հայտնվել՝ չնայած այլընտրանքների սակավությանը: Օրինակ՝ ֆրանսիացի տեսաբաններից Թոմաս Պիկետին իր «Կապիտալը 21-րդ դարում» գրքի մեջ նույնպես այս հարցերն է քննարկում և անդրադառնում է հավասարության հարցին: Հավասարությունը, որն ամրագրվել էր 1789 թ. Ֆրանսիական հեղափոխությունից հետո ընդունված մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում, ըստ հեղինակի, այդպես էլ իրականություն չի դարձել, և նույնիսկ Ֆրանսիայում անցած երկու հարյուրամյակների ընթացքում հավասարության գաղափարը բավարար չափով չի արժևորվել:

Այս պնդման հիմնավորումն են հանդիսանում մանրակրկիտ հետազոտությունների արդյունքները: Ըստ դրանց՝ Ֆրանսիայում 1914 թ. բնակչության ընդամենը 1%-ն էր տիրապետում ունեցվածքի 70%-ին: Այսինքն՝ Ֆրանսիական հեղափոխությունից հետո այս առումով ոչ մի էական փոփոխություն տեղի չի ունեցել: Եվ այսօր՝ ներկայիս ճգնաժամի ֆոնին, կրկին արդիական են դառնում հավասարության արժեքի շուրջ ծավալվող քննարկումները: Որոշ տեսաբաններ[3] նշում են կապիտալիզմի հետժողովրդավարական շրջանի մասին, երբ ժողովրդավարությունը հարմարեցված է շուկային և ոչ հակառակը: Այսինքն՝ ժողովրդավարական արժեքները, սկզբունքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն

[2] *Բրետոն-վուդյան համակարգը ֆինանսական հարաբերությունների և առևտրային հաշվարկների միջազգային կազմակերպման համակարգ է, որը հիմնվել է 1944 թվականին: Այն փոխարինել է միայն «ոսկու ստանդարտի» վրա հիմնված նախկին ֆինանսական համակարգը՝ այդպիսով ԱՄՆ դոլարը ոսկու հետ միասին ընդունելով իբրև միջազգային տարադրամ:*

[3] *Այդ մասին իրենց աշխատանքներում գրում են Էլեն Վուդը, Քոլին Քրաուչը, Սթիվեն Գիլը և այլ քաղաքագետներ:*

խանգարում շուկային: Այստեղ հարց է ծագում, թե ինչպես են այսօր վերափոխվում կապիտալիզմի և ժողովրդավարության միջև փոխհարաբերությունները: Եթե նայում ենք կապիտալիզմի նախկին մեծ ճգնաժամերին, որոնք ցիկլային բնույթ են կրել, ապա հետաքրքիր է արձանագրել դրանց արդյունքում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները: Դրանք եղել են թե՛ 19-րդ դարի «Երկարատև դեպրեսիայից» հետո, թե՛ 1929-1939 թթ. «Մեծ դեպրեսիայից» հետո: Վերջինիս, օրինակ, հաջորդեց Ֆ. Ռուզվելտի «Նյու դիլ» (New Deal) ծրագրերի շարքը: Այդպիսով քաղաքական գործիչները կարողացան կապիտալիզմի փրկության համար հաղորդել դրան մարդկային դեմք՝ իրականացնելով քաղաքական որոշակի նորմերի փոփոխություն: Ավելի ուշ՝ 1970-ականներին, վրա հասավ «Ֆորդիզմի ճգնաժամը», այսինքն՝ զանգվածային արտադրության ճգնաժամն ընդհանրապես հանգեցրեց կապիտալիզմի շուկաների տրամաբանության վերաիմաստավորմանը: Իսկ արդեն վերջին ճգնաժամը սկիզբ առավ 2008 թ.: Հետաքրքիրն այն է, որ այս բոլոր ճգնաժամերին հաջորդել է կապիտալի կուտակման ռեժիմի արմատական վերակազմակերպում: Դա դրական առումով տեղի է ունեցել, օրինակ, «Մեծ դեպրեսիայից» հետո: Կարելի է ասել, որ 1970-ականներից հետո ևս լուրջ կառուցվածքային փոփոխություններ տեղի ունեցան: Իսկ 2008 թ. սկիզբ առած ճգնաժամը, որ, թվում է, պետք է նման հանգուցալուծում ստանար, իրականում չհանգեցրեց այդպիսի փոփոխության: Պարզվեց, որ հանրային միջոցների հաշվին պետք է փրկել բանկերը, և դրանով իսկ կապիտալիզմը, ընդհանուր առմամբ, սկսեց կորցնել իր լեգիտիմությունը: Տարբեր ազգային պետություններում մարդիկ չէին հասկանում, թե ինչու պետք է իրենք ֆինանսավորեն այդ «բանկերի առողջացման» ծրագրերն այն դեպքում, երբ զուգահեռաբար խիստ խնայողական քաղաքականություն էր որդեգրվում, և սոցիալական ոլորտը գրեթե ամբողջությամբ կրճատվում էր:

Նեոլիբերալ նախագիծն ու դիմադրական շարժումներն Արևմուտքում

Այս պայմաններում ելքի մի քանի տարբերակներ կան. մեկը՝ դրական, ավելի ժողովրդավարական մոտեցումների ընտրությունը և մյուսը՝ ճանապարհ դեպի ավտորիտար կապիտալիզմ կամ ֆաշիզմ, ինչպես եղավ 20-րդ դարասկզբի ճգնաժամից հետո, երբ մի կողմից «Նյու դիլ»-ն էր ԱՄՆ-ում, մյուս կողմից՝ ֆաշիզմի վերելքը եվրոպական մի շարք երկրներում: Ժողովրդավարության և դրա սահմանման առումով նոր վերաիմաստավորում է տեղի ունենում: Ազատ ընտրություններից, իրավական պետությունից կամ լիբերալ ժողովրդավարության

այլ տարրերից բացի՝ շատ կարևոր են համարվում նաև հաշվետվողականությունը, հանրության մասնակցությունը որոշումների ընդունմանը կամ նյութական միջոցների վերաբաշխմանը: Այս հարցերն այսօր եկել են առաջին պլան: Իբրև գործող կապիտալիստական համակարգի էրոզիայի նշան մեկը մյուսի հետևից աշխարհի տարբեր ծայրերում ի հայտ են գալիս զանգվածային հակակապիտալիստական շարժումներ, որոնցից ամենաընդգծվածները արաբական երկրներում էին: Տարածված կարծիք կա, որ հենց դրանք էլ խթան են հանդիսացել կամ ազդակ տվել «Occupy»-ի կամ արևմտյան երկրներում ծավալված շատ այլ հակակապիտալիստական շարժումների համար: Օրինակ՝ Պորտուգալիայում և Իսպանիայում տեղի ունեցած զանգվածային ցույցերը որևէ արդյունքի չհանգեցրին, քանի որ «establishment»-ի կամ տիրապետող խավերի ու կայացած կուսակցությունների շրջանում ոչինչ հնարավոր չեղավ փոխել: Կարևոր էին ԱՄՆ-ի և Կանադայի օրինակները, երբ բռնության կիրառումը հակազդեցություն առաջացրեց, և այդ շարժումները դարձան ավելի ընդարձակ:

«Մենք ոչ ձախ ենք, ոչ էլ աջ, մենք ներքևից ենք գալիս»:

Իսպանական «Ինդիգնադոս» զանգվածային շարժում

Բնութագրական է, որ նման շարժումներում առաջին պլան են մղվում հանրային տարածքը և հանրային տարածքի գրավումը՝ որպես քաղաքական նոր սուբյեկտ ձևավորելու միջոց: Ամեն կերպ այս հակակապիտալիստական շարժումները ցանկանում են ցույց տալ, որ իրենք հեռու են մնում ավանդական կուսակցություններից և չեն ուզում նույնացվել դրանց կամ նոր փոխզիջումների գնալ դրանց հետ: Խոսքն այս դեպքերում հատկապես վերաբաշխման պայքարի մասին է, որն ուղղված է համայնքային ու հանրային կառուցվածքի պաշտպանությանը: Դրա նպատակն է հասնել հանրային բարիքների և բարեկեցիկ պետության, ինչպես եղել է 20-րդ դարի երկրորդ կեսին, երբ զարթոնք էր ապրում բարեկեցիկ պետության գաղափարը:

Պետության դերը

Հետաքրքիր է, որ վերոնշյալ նեոլիբերալ հեգեմոնիկ նախագծի գլխավոր դերակատարները մնում են ազգային պետությունները. հենց դրանք են առաջ մղում նեոլիբերալ նախագիծը: Այս առումով մեծ տեղ ունեն մարքսիստական ավանդույթի մեջ գտնվող կամ ձախական տեսաբանների քննադատությունները: Հայտնի հույն քաղաքագետ Պոլանցասը, օրինակ, իր մատերիալիստական տեսություններում պետությունը ներկայացնում

է իբրև իրենից դուրս գտնվող սոցիալական ուժերի փոխհարաբերությունների խտացում (ի դեպ, Հունաստանում առկա է պատմականորեն հակակապիտալիստական «ձախական» տեսական հարուստ ավանդույթ, որը զարգացել է 20-րդ դարի ամբողջ ընթացքում): Այս քաղաքագիտական մոտեցումից և վերջին ճգնաժամի զարգացումից կարելի է ենթադրել, որ հակակապիտալիստական այլընտրանքի հեռանկարը կարող է կենսունակ դառնալ միայն այն դեպքում, երբ առկա է ըմբռնում, որ նման ուժերի քաղաքական իշխանությունը հենվում է աշխատավոր դասակարգերի և հանրության մեջ նրանց դաշնակիցների կազմակերպված կառույցների վրա: Հենց այդ պատճառով էր, որ մի շարք երկրներում, օրինակ՝ Հունաստանում, ԱՄՆ-ում և այլուր վերջին տասնամյակների ընթացքում ուժեղացան անարխիստական շարժումները, քանի որ զանգվածային շարժումների միջոցով չստացվեց մեծ փոփոխության հասնել: Ըստ այդմ, փոփոխությունն անհնար է, եթե դու չես հասնում քաղաքական իշխանության: Եթե դու ոչինչ չես որոշում, ուրեմն՝ ոչինչ էլ չես փոխում. եթե նույնիսկ միլիոնավոր մարդիկ են դուրս գալիս փողոց, նրանք հաջորդ օրը գնալու են տուն, և ամիսներ անց այդ շարժումը մարելու է: Հետևաբար, մի կողմից կարևոր է դառնում իշխանության հասնելը, մյուս կողմից, եթե որևէ կուսակցություն կարողացել է իշխանության գալ հակակապիտալիստական հռետորաբանությամբ, ապա կարևոր է, որ այն պահպանի կապը փողոցի՝ շարժումների հետ, որոնցից սերում է: Հնարավոր տարբերակ է նաև որևէ մոզայիկ կուսակցության կամ ուժի գործադրումը, որը կկարողանա համադրել բազմաթիվ տարբեր ուժերի օրակարգերը:

Նեոլիբերալ նախագիծը նախկին սոցիալիստական երկրներում

1990-ականներից սկսած՝ Արևելյան Եվրոպայի և հետխորհրդային երկրները, այդ թվում Հայաստանը, ուժգին նեոլիբերալ հարձակման ենթարկվեցին: Դրանցում ամբողջովին մասնավորեցվեցին տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը: Չնայած մի կողմից դրական էր այն հանգամանքը, որ Եվրամիությունն այդ երկրներում «փափուկ բարձ» դրեց ֆինանսական ներարկումների և սոցիալական որոշ ստանդարտների տեսքով, այնուամենայնիվ, զարգացումն Արևելյան Եվրոպայում կետային բնույթ է կրել, և հիմնականում «օազիսներ» ձևավորել են արևմտյան խոշոր կորպորացիաները: Կարելի է ասել, որ քաղաքական բաժանումից հետո Եվրոպան սոցիալական բաժանման մեջ է հայտնվել՝ հյուսիս-հարավ և արևմուտք-արևելք: Արևելքում թույլ է քաղաքական հակակապիտալիստական դիմադրությունը՝ ելնելով սոցիալիստական ԽՍՀՄ

անցյալին դիմադրելու ձգտումից: Մեկ այլ՝ «համակենտրոն շրջանագծերի» տեսության անկյան տակ Եվրոպայում երևում է կենտրոն-ծայրամաս հակադրությունը: Կենտրոնն, իհարկե, Եվրամիության զարգացած միջուկն է, իսկ դրա շուրջ գոյություն ունի ծայրամաս արևելքում և հարավում: Այն խոշոր ընկերությունների համար գործում է իբրև յուրօրինակ «բուֆերային գոտի», որոնք եվրոպական նորմերի և ստանդարտների ներդրումից հետո հաստատվում են այդտեղ՝ օգտագործելով առկա էժան աշխատուժը, իսկ այնուհետև անցնում մյուս ծայրամասին, որն ավելի էժան աշխատուժ կառաջարկի: Հատկապես եթե աշխատավարձի բարձրացման հարց է ծագում, ապա դրանք պատրաստ են լքել տվյալ երկիրը, եթե, իհարկե, այն եզակի և առանձնահատուկ շրջանակային պայմաններ չի առաջակրում: Ոմանք դա կոչում են «մորեխային կապիտալիզմ», երբ կորպորացիաները թողնում են թանկ աշխատուժը հին երկրներում և տեղափոխվում նոր երկրներ: Պատահական չէ, որ ԱՄՆ պաշտպանության նախկին նախարար Դոնալդ Ռամսֆելդը խոսում էր Նոր և Հին Եվրոպաների մասին (New Europe, Old Europe):

Իհարկե, Հայաստանը 1990-ականների սկզբին նույնպես հայտնվեց տոտալ մասնավորեցման գործընթացում և նույնիսկ այդ առումով դարձավ գովաբանվող օրինակ կամ Արժույթի միջազգային հիմնադրամի ու Համաշխարհային բանկի լավ աշակերտ: Բացի այդ, Եվրոպայի հարավում այժմ տեղի ունեցող զարգացումները նույնպես առնչվում են Հայաստանի խնդիրներին, քանի որ մենք որոշ առումով նույն մտածողական ձևերի և տնտեսաձևերի երկիր ենք: Հունաստանի կոռուպցիոն ցանցերն ու դրանց հետ կապված խնդիրները շատ նման են հայկական հիմնախնդիրներին: Իսկ որպես հետխորհրդային երկիր՝ մտնում ենք նույն օրինաչափությունների մեջ, որոնցով անցել են Արևելյան Եվրոպայի երկրները:

Ինտեգրացիոն գործընթացի հիմնական դերակատարներն ու մոտեցումները

Արժե խոսել այն մասին, թե ովքեր են տնտեսական ապակարգավորման և ինտեգրացիոն գործընթացների գլխավոր դերակատարները և որոնք են եվրաինտեգրման վերաբերյալ միմյանց հետ մրցակցող երեք հիմնական մոտեցումները:

Առաջինը նեոֆունկցիոնալիզմն է, ըստ որի, եթե գոյություն ունի գործառույթ, ապա ինտեգրման ձևը հարմարվում է դրան: Այսպես օրինակ, եթե երկրների միջև զարգանում է առևտուրը, և ստեղծվում են շրջանակային պայմաններ, իջեցվում են մաքսերն ու ապահովվում է ապրանքների, ֆինանսների, անձանց

և ծառայությունների ազատ շրջանառությունը, ապա այդ երկրները որոշ ժամանակ անց ընտրում են ինտեգրացիոն որոշակի ձևեր, և նրանց միջև կայանում է փոխկապակցվածություն և համահարթեցում:

Նեոֆունկցիոնալիզմի հետ մրցակցում է միջկառավարականությունը (intergovernmentalism): Այն ներկայացնում է ինքնիշխանության կողմնակիցներին, որոնք պայքարում են պետությունների այնպիսի ինտեգրացիայի համար, որի դեպքում պետության շահերը և ինքնիշխանությունը չեն տուժում:

Երրորդը պատմական մատերիալիզմի քննադատական դպրոցն է, որը ինտեգրացիոն հարաբերությունները դիտարկում է իմպերիալիստական միտումների տեսանկյունից: Տվյալ դեպքում Եվրամիությունը ընկալվում է իբրև պոտենցիալ կայսերական դերակատար, որն իր շահերն է հետապնդում մյուս կայսրությունների հետ մրցակցության մեջ: Քննադատական մոտեցումը հատուկ է ձախական քաղաքական ուժերին:

Կոշտ խնայողությունը՝ 2008 թ. ճգնաժամի պատասխան

Կոշտ խնայողության քաղաքականությանը (austerity) այլընտրանքների բացակայության պայմաններում 2008 թ. դարձավ միակ պատասխանը ճգնաժամին: Անցում կատարվեց խիստ խնայողության քաղաքականության, որն էլ ավելի խորացրեց ճգնաժամը դրանից արդեն իսկ տուժած երկրներում, այդ թվում նաև՝ կապիտալիստական կենտրոններում: Սրանով բանկերի փրկությունը դրվեց իբրև առաջնահերթ խնդիր: Մեղմելու համար «austerity» բառի բացասական երանգավորումը՝ այն կոչեցին «ֆիսկալ կարգապահություն», որի դեպքում կառավարություններն ապահովում են կարգապահ բյուջե և ծախսում այնքան, որքան վաստակել են: Հետաքրքիր է, որ դրա ամենամեծ ջատագովներից մեկը Գերմանիան է: «Ծախսիր այնքան, որքան ունես գրպանումդ». այսպիսին է Գերմանիայի հարավային Շվաբիայի նահանգի տնային տնտեսուհիների կենսափիլիսոփայությունը: Շվաբները հայտնի են որպես տնտեսող, ինչպես մեզանում հայտնի են վանեցիները: Ըստ այդմ, շվաբ տնային տնտեսուհու խնայողական տնտեսվարումը դառնում է եվրոպական բոլոր երկրների բյուջետային խիստ կարգապահ քաղաքականության մոդել:

Բայց արդյո՞ք ճիշտ է այս մոտեցումը. չէ՞ որ պետությունը տնային տնտեսություն չէ: Երբ պետությունը հարկադրված կրճատում է սոցիալական (առողջապահության, կրթության, աշխատավարձային ֆոնդի) ծախսերը, նշանակում է, որ ինչ-որ մարդիկ աշխատավարձ չեն ստանալու՝ զրկվելու են եկամտից, և իրենց սոցիալական վիճակը վատթարանալու է:

Այնինչ դրան հակառակ, ըստ տնտեսագետ Քեյնսի[4] , ճգնաժամի ժամանակ անհրաժեշտ է մեծացնել ներդրումները՝ խթանելով պահանջարկը: Պահանջարկը խթանելու փոխարեն խնայողության արդյունքում այն անկում է ապրում, մարդկանց սոցիալական վիճակը վատթարանում է, և տնտեսության մեջ առաջանում են ավտորիտար միտումներ:

Խնայողության քաղաքականության ակունքներում կանգնած են 1980-ականների երկու հիմնական դերակատար՝ ԱՄՆ նախագահ Ռ. Ռեյգանն ու Մեծ Բրիտանիայի վարչապետ Մ. Թեթչերը: Նրանց կառավարման շրջանում ճնշման տակ հայտնվեցին արհմիությունները, կրճատվեցին սոցիալական բոլոր «համեղ պատառները»՝ պետական ֆինանսավորումով խթանվող գործիքները: Նրանց կարծիքով խնայողությունը համարձակ ծրագիր էր, որը գաղափարական տեսանկյունից հիմնվում էր Ֆրիդրիխ Ավգուստ ֆոն Հայեկի տնտեսագիտական մոտեցումների վրա: Եթե Մեծ Բրիտանիայում հարուստներից գանձվող եկամտահարկի ամենաբարձր տոկոսադրույքը 1957 թ. 83% էր, ապա 1989 թ. այն իջավ 40%-ի, զուգահեռաբար կառավարությունը կոշտ խնայողության քաղաքականություն էր վարում: Սա նշանակում է, որ այդպիսի քաղաքականությունը ոչ թե առողջացման կամ անայլընտրանք չեզոք խնայողություն է, այլ որոշակի միտումով վերաբաշխման ուղղություն: Դրա արդյունքում շահում է հասարակության որոշակի հատված, օրինակ՝ բանկերը, ինչպես նաև մեծ ներդրողները, որոնց համար նպաստավոր պայմաններ են ստեղծվում:

Պարտադրված խնայողությունը Հունաստանում

Տնտեսական ճգնաժամից դուրս գալու համար Հունաստանին 2010 թ. պարտադրեցին այսպիսի «խնայողության քաղաքականություն», որից հետո տնտեսության անկումն էլ ավելի մեծացավ:

Միայն 2014 թ. արձանագրվեց 0.6% աճ, այնինչ սկսած 2011 թ. ներդրումները տարեցտարի 2008 թ. համեմատ նվազում են, իսկ 2008 թ. մինչև 2014 թ. մեկ միլիոնից ավելի մարդ դարձել է գործազուրկ: Տարեկան մոտ հիսուն հազար կրթություն ունեցող մարդ լքում է երկիրը. տեղի է ունենում «ուղեղների

---

[4] *Ջ. Քեյնսի առաջարկած՝ պահանջարկի խթանմանն ուղղված տնտեսական քաղաքականությունը գերիշխում էր արևմտյան գրեթե բոլոր երկրներում 20-րդ դարի երկրորդ կեսին: Քեյնսի հիմնական «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն» աշխատանքը լույս է տեսել 1936 թ.:*

[3] *Տնտեսագետ Ֆ. Ա. ֆոն Հայեկը նոր ավստրիական դպրոցի ներկայացուցիչ է, որը իր աշխատություններում հիմնավորում էր նոր ազատական շուկայի գաղափարը՝ ցանկանալով բացառել պետական վարչարարների կողմից տնտեսության միջամտությամբ այն ավտորիտարացնելու վտանգները:*

արտահոսք»: Սա խոսում է այն խզման մասին, որն առաջացել է եվրոպական տարածաշրջանների միջև: Ուշագրավ է, որ ներկայիս Գերմանիայի ֆինանսների նախարարը շվաբական ծագում ունի, այսինքն՝ խնայողական մշակույթի կրողն է: Նա ասում է, որ Հունաստանին նոր վարկեր չեն տրամադրվելու, մինչև նրանք հին վարկերը հետ չվճարեն: Հետաքրքիրն այն է, որ տրամադրած վարկերի, դրամական ներարկումների մեծ մասը Հունաստանն անմիջապես հետ է վճարում եվրոպական բանկերին, քանի որ հունական բանկերի մեծ մասը գտնվում է եվրոպական, մասնավորապես՝ գերմանական բանկերի ձեռքում կամ վերջիններիս պարտապանն է: Ողջ այս գործընթացը վերահսկում է Եռյակը՝ Եվրոպական կենտրոնական բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը և Եվրոպական հանձնաժողովը:

Այս իրավիճակում ի՞նչ է նշանակում ձախական քաղաքական ուժերի հաղթանակը Հունաստանում: Նրանք շատ բարդ կացության մեջ են հայտնվել և պետք է հաստատման ձևեր գտնեն, քանի որ եվրոպական ամբողջ վերնախավը աշխատում է նրանց քաղաքական նպատակները տապալելու ուղղությամբ: Այլապես այս նախադեպով հնարավորություն կստեղծվի, որ մյուս երկրները նույնպես փորձեն դուրս գալ նեոլիբերալ ուղեգծից: Իհարկե, նրանք դաշնակիցներ[6] ունեն եվրոպական տարբեր երկրներում, ինչը հնարավորություն է եվրոպական ձախերի համար համաեվրոպական օրակարգ ձևակերպելու առումով:

Առնչությունները Հայաստանին

Հայաստանը, հարավային Եվրոպայի հետ մշակութային նմանություններից բացի, ունի նաև տնտեսական քաղաքականությունների նմանություն: Մինչ օրս Հայաստանը շատ ընդգծված ձևով շարունակում է հակասոցիալական պետական քաղաքականությունը, այսինքն՝ որևէ սոցիալական նախագիծ չի մտնում կառավարության օրակարգ: Նույնիսկ սոցիալական փաթեթները ծառայում են նրան, որ տեղի չունենան «ապստամբություններ», և բնակչության որոշակի խմբի սոցիալական վիճակը ծայրահեղ աստիճանի չհասնի: Այսինքն՝ կենսամակարդակը պահվում է բավարար, բայց ոչ պատշաճ մակարդակի վրա: Նույնիսկ պաշտոնական տվյալներով Հայաստանի բնակչության գրեթե 40%-ը աղքատ է:

[6] *Դաշնակիցների շարքում են Եվրախորհրդարանում ներկայացված որոշ ուժեր, Իսպանիայում քաղաքացիական շարժումների հիմքի վրա ձևավորված «Պոդեմոս» կուսակցությունը, ինչպես նաև հակակապիտալիստական շարժումները Եվրոպայում:*

Մենք հաճախ լսում ենք, թե ինչպես է Հայաստանի կառավարությունը օրինակելի ձևով կատարում Արժույթի միջազգային հիմնադրամի պահանջները: Այն վարկեր է վերցնում Երևանի լուսավորման համար կամ ենթակառուցվածքային այլ ծրագրերի համար, որոնք, սակայն, հնարավորություն չեն ստեղծում թույլ օղակների բարգավաճման համար: Դրա փոխարեն վարկերը ծանր բեռ են դառնում պետության վրա: Ի տարբերություն Հունաստանի՝ Հայաստանի արտաքին պարտքը դեռևս չի գերազանցում ՀՆԱ 45%-ը, այնինչ Հունաստանի դեպքում այն կազմում է շուրջ 322 միլիարդ դոլար, որը հավանաբար իրենք երբևէ չեն վերադարձնի: Տեսնում ենք, որ Հայաստանը ևս գտնվում է հեգեմոն դարձած տնտեսվարման քաղաքականությունների դաշտում:

Եթե կա հեգեմոնիա, ապա կարող է լինել նաև հակահեգեմոնիա: Ներդնելով այլ արժեհամակարգ, այլ փոխհարաբերություններ պետություն-քաղաքացիական հասարակություն-միջազգային քաղաքատնտեսություն համալիրի մեջ՝ կարելի է ստեղծել հակահեգեմոնիան: Հենց այդ ուղղությամբ էլ աշխատում են հակակապիտալիստական շարժումներն աշխարհում: Իմ գնահատմամբ, Հայաստանում գործընթացները շատ դեպքերում բավական համընթաց են միջազգային միտումներին: Ճիշտ է, մեզանում կազմակերպական կառույցների մակարդակն ավելի ցածր է, քան Եվրոպայում, բայց աշխարհին զուգահեռ մեզ մոտ նույնպես քննադատական խմբերի շրջանում տեղի է ունենում հանրային տարածքի արժևորում, պայքար հանրային ծառայությունների համարժեք սակագին հաստատելու համար՝ այն արդեն դիտարկելով որպես սոցիալապես արդար սակագների հաստատման պահանջ, դրվում են ժողովրդավարական վերահսկողության, բնապահպանական տնտեսության, արդար կենսաթոշակային համակարգի հարցեր: Այս ամենը խոսում է շարժումների տրամաբանության մասին: Մինչ այժմ կենսաթոշակային համակարգի մասնավորեցման դեմ շարժումն, ըստ էության, ամենազանգվածային շարժումն էր, և ինձ թվում է, որ մասամբ հաջողության հասավ: Այն կարևոր էր, քանի որ դրված էր ամբողջ կենսաթոշակային համակարգի մասնավորեցման հարցը և, իհարկե, եկամուտների արդար վերաբաշխման խնդիրը: Հարկ է նշել, սակայն, որ ոչ մի քաղաքական ուժ Հայաստանում դեռևս չի կարողացել կանոնավոր բողոք կամ ինքնակազմակերպվող ալիք ձևավորել սոցիալական արդարության խնդրի շուրջ: Դա կապված է նաև թույլ արհմիությունների հետ: Եթե արհմիութենական շարժումները թույլ են, ապա թույլ է նաև հասարակական կազմակերպված բողոքի ալիքը: Սա թերևս այն հիմնարար խնդիրներից է, որի շուրջ դեռևս պետք է մոբիլիզացվեն հանրային շարժումները:

Գրականություն

1 | Ժիժեկ, Ս. (2015 հուլիս 23) *Ժամանակակից կապիտալիզմը սահմանափակում է դեմոկրատիան*: 2016.09.21-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://diskurs.am/2015/07/564

2 | Իգլեսիաս, Պ. (2015 փետրվար 09) *Ձախերը կարող են հաղթել*: 2016.09.21-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://diskurs.am /2015/02/500

3 | Իշխանյան, Ա. (2013) *Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը և բնապահպանական ակտիվիզմը Հայաստանում*: Երևան. Սոցիոսկոպ:

4 | Մոնբիո, Ջ. (2016 հուլիս 05) *Նեոլիբերալիզմ՝ մեր բոլոր խնդիրների հիմքում ընկած գաղափարախոսությունը*: 2016.09.21-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://diskurs.am /2016/07/840

5 | Սոլթի, Ի. Սողոմոնյան Վ. (2015 հոկտեմբեր 05) *Հայաստանը նեոլիբերալիզմի համաշխարհային զարգացումներում*: 2016.09.21-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://youtu.be/_gDAh80cpTU

6 | Crouch, C. (2004) *Post-Democracy*. Hoboken.

7 | Gramsci, A. (1971) *Selections from the Prison Notebooks*. International Publishers.

8 | Harvey, D. (2007) *A Brief History of Neoliberalism.* Oxford: Oxford University Press.

9 | Hayek, F. A. (2001) *The Road to Serfdom.* London: Routledge.

10 | Mason, P. (2013) *Why It's Kicking Off Everywhere: The New Global Revolutions.* London/New York: Verso.

11 | Poulantzas, N. (2001) *State, Power, Socialism.* London/New York: Verso.

12 | Wood, E. M. (1995) *Democracy Against Capitalism.* Cambridge: Cambridge University Press.

ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԻՆԵՐ

Արփի Մանուսյան

Արփի Մանուսյանը սոցիոլոգիայի մագիստրոսի աստիճան է ստացել Երևանի պետական համալսարանում: Հետխորհրդային երկրներում, մասնավորապես՝ Հայաստանում տեղի ունեցող սոցիալական շարժումները նրա հիմնական մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն են: Երկար տարիներ ուսումնասիրել է մարդու իրավունքների, շարժումների և քաղաքական գաղափարների դիսկուրսները մեդիայում:

Ա. Մանուսյանն իր տեքստում դիտարկում է 1970-1980-ականների իրավապաշտպան պայքարը Խորհրդային Միությունում՝ հիմնվելով Ա. Պոդրաբինեկի այլախոհական փորձառության պատմության վրա: Տեքստը նպատակ ունի քննարկման ասպարեզ բացել այլախոհական պայքարի պրակտիկաների և մեխանիզմների կիրառելության հնարավորության շուրջ մի իրադրության մեջ, երբ այլակարծության ճնշման խորհրդային պրակտիկաները հաջողությամբ վերարտադրվում են հետխորհրդային երկրներում:

Իրավապաշտպան պայքարի սկզբունքները. 1970-1980-ականների խորհրդային փորձառությունը

Այս տեքստը կազմված է 2015 թ. ապրիլին իրավապաշտպան Միքայել Դանիելյանի հետ միասին մեր ընթերցած բանախոսության հիման վրա: Շնորհակալ եմ Միքայելին, որ ինձ հաղորդակից դարձրեց ուշ խորհրդային այլախոհական պատմությանը, Ա. Պոդրաբինեկի հետ ընկերությանը և դրանից ստացած իր փորձառությանը:

Այս ուսումնասիրությունը փորձ է հետահայաց դիտարկելու 1970-1980–ական թվականների հանուն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության այլախոհական շարժումը՝ ուրվագծելով պայքարի և պայքարը ճնշելու իշխանական սկզբունքները և պրակտիկաները:

Տեքստի հիմքում Ալեքսանդր Պոդրաբինեկի[1] «Диссиденты» («Այլախոհները») ինքնակենսագրական գիրքն է (Подрабинек 2014), որն ասպարեզ է բացում այլախոհական շարժման համատեքստը, դրա սկզբունքները և պրակտիկաները, ինչպես նաև 1970-1980 թվականների Խորհրդային Միությունում այլախոհների նկատմամբ կիրառվող բռնաճնշումները դիտարկելու համար:

Համարվում է, որ իրավապաշտպան (կամ «լիբերալ», «հանուն ժողովրդավարության», «քաղաքացիական դիմադրության») այլախոհական շարժումը սկիզբ է առել 1965 թ. դեկտեմբերի հինգին, երբ Մոսկվայի Պուշկինի հրապարակում կայացել է իրավապաշտպան կոչերով առաջին ցույցը (Алексеева 2012): Ստալինի մահը (որն ինչ-որ առումով խորհրդային հասարակության համար ինքնաքննության և վերաիմաստավորման հնարավորություն էր) և հատկապես քաղաքական հոդվածներով դատապարտված բազմաթիվ քաղաքացիների վերադարձը աքսորներից կարևոր նախապայման էին իրավապաշտպան շարժման ձևավորման համար (Алексеева 2012):

Սկիզբ առնելով 1965 թ. իրավապաշտպան այլախոհական շարժումն անցել է զարգացման մի քանի փուլեր: Առաջին փուլը շարժման կայացումն էր՝ ընդգրկելով 1965-1972 թվականները[2] : Այս շրջանում ձևավորվել են իրավապաշտպան առաջին խմբավորումները, սահմանվել են իրավապաշտպան պայքարի ուղղությունները, ինչպես նաև՝ քաղբանտարկյալների օգնության

[1] *Ալեքսանդր Պոդրաբինեկը Ռուսաստանի իրավապաշտպան շարժման ակտիվ անդամ է եղել: 1978-ին ձերբակալվել է՝ մեղադրվելով սովետական կարգը զրպարտելու մեջ և արտաքսվել է հյուսիսարևելյան Սիբիր հինգ տարով: 1979-ին ԱՄՆ-ում լույս է տեսել նրա «Պատժիչ բժշկություն» գիրքը: 1980-ին կրկին ձերբակալվել է և դատապարտվել 3,5 տարվա աքսորի:*

[2] *Փուլերի նկարագրությունն առավել մանրամասն տե՛ս http://www.allinhistory.ru/hists-804-1.html (այց՝ 2016.07.28):*

ֆոնդի գաղափարն ու մեխանիզմը: Այս շրջանի կարևոր ազդարարներից էին մի կողմից «Ընթացիկ իրադարձությունների քրոնիկոն»-ի («Хроника текущих событий») հրատարակությունը և մյուս կողմից հոգեբուժարանների՝ իբրև այլախոհների ճնշման և մեկուսացման ինստիտուտի լայն կիրառությունը:

Երկրորդ փուլը (1973 – 1974 թվականներ) համարվում է շարժման ճգնաժամի շրջան: Սա կապված է մի քանի այլախոհների[3] ձերբակալության և դատավարության հետ, որոնք ճնշումների արդյունքում համաձայնեցին համագործակցել խորհրդային ԿԳԲ-ի հետ: Այս համագործակցությունը բերեց ավելի մեծ թվով այլախոհների ձերբակալության և դատավարության, ահագնացան իշխանական հարձակումները ինքնահրատ (самиздат) գործունեության վրա:

Երրորդ փուլը (1974 – 1975 թվականներ) համարվում է այլախոհական շարժման միջազգային ճանաչման լայն շրջան:

Չորրորդ՝ վերջին փուլը (1976 – 1981 թվականներ) անվանվում է Հելսինկյան: Այս շրջանում ստեղծվում է ԽՍՀՄ-ում Հելսինկյան համաձայնագրերի իրագործման օժանդակության խումբը Յու. Օրլովի գլխավորությամբ: Խմբի հիմնական գործունեությունը ԽՍՀՄ-ում Հելսինկյան համաձայնագրերի խախտումների հավաքագրումն ու փաստաթղթավորումն էր:

> **«1977 թ. վերջնականապես պարզ դարձավ, որ ԿԳԲ-ն մտադիր է հաշվեհարդար տեսնել այլախոհական շարժման հետ՝ բանտ նստեցնելով նրա ամենաակտիվ անդամներին կամ էլ արտաքսելով նրանց արտասահման»** (Подрабинек 2014: 104):

Ահա այսպիսի համատեքստում էին այլախոհները ծավալում իրենց գործունեությունը ուշ խորհրդային շրջանում: Այսօր այլախոհական պայքարի սկզբունքների ըմբռնումը և քննարկումը հատկապես կարևոր են, քանի որ հասարակական փոփոխությանը միտված ակտիվ խմբերի և անհատների շրջանում բարձրաձայնվում է մտահոգությունն առ այն, որ հայաստանյան շարժումներում տեղի է ունենում պայքարի մեթոդների և մեխանիզմների ճգնաժամ: Պայքարի և դիմադրության այն գործիքները, որոնք վերջին տարիներին օգտագործվել են տարբեր շարժումներում և նախաձեռնություններում՝ պայքարելու համակարգի և իշխանական ճնշումների դեմ, հանգեցրել են անընդհատ կրկնվող փակուղային մի իրավիճակի: Մյուս կողմից ունենք հասարակության և պետության շարունակական ոստիկանացում և ռազմականացում. քաղաքացիներին ճնշելու բռնի և ապօրինի մեթոդները, որ կիրառում է համակարգը, վտանգավորության աստիճանի «սովորական» պրակտիկա է դառնում մեզանում:

[3] *Օրինակ՝ Պ. Յակիր, Վ, Կրասին և այլք:*

Այս տեսանկյունից տեքստը նաև քննարկման հրավեր է մի քանի հարցերի շուրջ. ինչու՞ և ինչպե՞ս են շարժումների ճնշման խորհրդային պրակտիկաները հաջողությամբ վերարտադրվում հետխորհրդային երկրներում, հնարավո՞ր է և արդյոք իմաստ ունի՞ օգտագործել այլախոհական պայքարի պրակտիկաները հետխորհրդային արդի հասարակություններում, արդյո՞ք իշխանության դեմ պայքարի միջոցները կարող են լինել համընդհանուր:

Այլախոհական պայքարի որոշ սկզբունքների և պրակտիկաների շուրջ

Ա. Պոդրաբինեկը նկարագրում է այլախոհական շարժումն իբրև հորիզոնական և ինքնակազմակերպվող՝ առանց որոշում ընդունող կենտրոնական կամ կազմակերպական մարմնի: Շարժումը հիմնված է եղել ցանցային հարաբերությունների և սոլիդարության վրա. արդյունավետ են եղել փոխօգնության ցանցերը, որոնք հատկապես մեծ թափ են առել որևէ այլախոհի նկատմամբ իրականացվող ճնշումներից անմիջապես հետո: Փոխօգնության ցանցերը հատկապես արդյունավետ են եղել աքսորավայրերում կամ բանտերում գտնվող այլախոհներին աջակցելու տեսանկյունից: Սա նաև կապված է այլախոհական համայնքի՝ միմյանցից տեղեկացված լինելու և համակարգված գործելու առանձնահատկության հետ:
Իրավապաշտպան այլախոհական շարժումը մղում էր բաց պայքար: Սա մի բան էր, որ, ըստ Պոդրաբինեկի, չէին ըմբռնում խորհրդային իշխանությունները՝ մշտապես փնտրելով փակ և ընդհատակյա խմբավորումներ: Պայքարի թափանցիկությունը, ինչպես նաև դրա ցանցային բնույթը, այլախոհների՝ խորհրդային համակարգից պաշտպանված լինելու երաշխիքներից մեկն էր:
Սրան հակառակ՝ ազգայնական այլախոհական պայքարը (որի հիմքում ազգային ինքնորոշման հարցերն էին) կիրառում էր սկզբունքորեն այլ պրակտիկաներ: Ազգայնական այլախոհական համայնքը փակ էր և հիմնականում գործում էր ընդհատակում: Ազգայնական հիմքով այլախոհական շարժումներ կային, օրինակ՝ Հայաստանում, Ուկրաինայում: Այսպես, Վարդան Հարությունյանն իր «Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում» գրքում գրում է.

> **«Անգամ 1977-ին հրապարակված հայկական Հելսինկյան խմբի հռչակագրում, որը, թվում է, զուտ այլախոհական-իրավապաշտպանական կազմակերպություն պետք է լիներ և առաջնորդվեր միմիայն Հելսինկյան համաձայնագրերով՝ ասվում է, որ Հայաստանը ձգտում է դառնալ ՄԱԿ-ի անդամ՝ «աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի համազգային խնդիրները լուծելու համար», և որ պետք է հասնել «ներկայումս Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ մտնող Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի ինքնավար մարզի վերամիավորմանը Հայաստանի Հանրապետությանը», նաև՝ պետք է «պահանջել հայոց լեզվի կիրառումը Հայաստանի կյանքի բոլոր բնագավառներում»** (Հարությունյան 2014):

Պոդրաբինեկի՝ այլախոհական պայքարի անձնային փորձառության պատմությունը երևան է հանում դրա՝ բնույթով ոչ հեղափոխական, նույնիսկ հակահեղափոխական լինելը: Չնայած խորհրդային իշխանությունների կողմից իրավապաշտպան այլախոհական շարժումը որակվել է իբրև հեղափոխական, այն առավելապես միտված է եղել խորհրդային հաստատված կարգն ու սահմանադրական իրավունքներն իրական պրակտիկա դարձնելուն՝ պահանջելով մարդու իրավունքների և ազատությունների իրական հավասարություն բոլորի համար և սահմանելով այլախոհական պայքարի նպատակը բարեփոխման տրամաբանության շրջանակներում:
Մյուս կողմից խորհրդային ռեպրեսիվ ինստիտուտների հետ հարաբերվելու, համագործակցելու մերժումով այլախոհներն իրենց ձևակերպում էին իբրև հակահամակարգ գերիշխող համակարգի ներսում: Այս իմաստով հեղափոխական չլինելը և միևնույն ժամանակ համակարգի բարեփոխման ձգտումը կարծես թե հակասում են միմյանց: Սակայն այս, նաև այլ հակասություններ, որոնք ակներևաբար ի հայտ են գալիս այլախոհական պայքարը ուսումնասիրելիս, կարող ենք դիտարկել դրա՝ փորձառական բնույթի, ինչպես նաև մարդու իրավունքների՝ իբրև արևմտյան կոնցեպտի ոչ լիարժեք ներքնայնացման տեսանկյուններից:
Ավելին, այլախոհական շարժումը մերժում էր բռնության կիրառումն իբրև պայքարի սկզբունք՝ այդ կերպ հակադրվելով համակարգին: Պայքարի այս մեխանիզմի հիմքում հիմնավորումն է, որ ամբողջատիրական համակարգին հակադարձելու համար անհրաժեշտ է կիրառել ոչ բռնի պայքարի պրակտիկաներ: Այս համատեքստում հետաքրքրական է Պոդրաբինեկի հետահայաց մտահոգությունն առ այն, որ թերևս ոչ բռնի պայքարի ռազմավարության պատճառով է, որ այլախոհական պայքարը այդքան երկար է տևել[4]:

---

[4] Այսօր Հայաստանում առկայանում է իշխանական համակարգի դեմ բռնի և ոչ բռնի պայքարի մեթոդների վերահմաստավորման ու դրանց կիրառելիության հնարավորությունների և սահմանների շուրջ հանրային քննարկման հարցը հատկապես «Սասնա Ծռեր» խմբի կողմից ձեռնարկված զինված ապստամբությունից հետո:

Պատմելով իր այլախոհական փորձառության մասին՝ Պոդրաբինեկը գրում է, որ երբևէ որևէ ցուցմունք չի տվել, չի պատասխանել քննիչի հարցերին, իսկ դատարանում հրաժարվել է փաստաբանից, շատ հաճախ նույնիսկ ելույթ ունենալուց: Էական է եղել փաստաթղթերի չստորագրման պրակտիկան. այլախոհները կարծում էին, որ իրենց ստորագրությունը կարող է ամեն տեղ և ցանկացած դեպքում օգտագործվել իրենց իսկ դեմ:

> **«Նրանք կփորձեն քեզ համոզել, որ շատ լավ հասկանում են քեզ, որ իրենք էլ են դեմ համակարգին, բայց ի՞նչ արած՝ իրենք աշխատում են այդ համակարգում... Կսկսեն նույնիսկ Բրեժնևի մասին անեկդոտներ պատմել, բայց դու չպետք է դրանց տրվես, որովհետև պետք է հասկանաս, որ ցանկացած դեպքում դու նստելու ես [բանտ]: Իսկ եթե որոշել են քեզ աքսորել, միևնույն է՝ աքսորելու են...»** (Подрабинек 2014: 123):

Միաժամանակ Պոդրաբինեկը դատարանը դիտարկում էր իբրև հանրային վայր, որտեղ մարդն ազատորեն կարող է արտահայտել իր կարծիքը Խորհրդային Միության մասին:
Հանրային գործունեության մեջ բաց լինելը մի կողմից, իսկ մյուս կողմից այլախոհական համայնքի ներքին հարաբերություններում փակ լինելը իշխանություններից հնարավորինս պաշտպանվելու մեխանիզմներից մեկն էր: Այստեղ խոսքը հատկապես այլախոհական համայնքում որոշումների կայացման, ներքին գործընթացների կազմակերպման սկզբունքների, տարբեր մոտեցումների, շարժման հեղինակությունների վերաբերյալ տեղեկատվության տարածման սահմանափակումն էր: Այլախոհների մտավախությունն այն էր, որ համակարգը արդյունավետորեն յուրացնում և գաղութացնում է իրեն հակադարձող պայքարի պրակտիկաները՝ այդ կերպ թուլացնելով շարժումը:

Այլախոհական պայքարի ճնշման որոշ սկզբունքների շուրջ

Ա. Պոդրաբինեկը այլախոհության իր ինքնակենսագրականում պատմում է, որ այլախոհների ճնշման առավել տարածված պրակտիկաներից էին շարժման հատկապես ամենաակտիվ ներկայացուցիչների ձերբակալումն ու արտաքսումը, հարկադիր մեկնումի կամ գերեվարության սկզբունքը, խորհրդային ԿԳԲ-ի շարունակական հետապնդումները, որոնք հաճախ ոչ այնքան ֆիզիկական, որքան հոգեբանական ճնշման և ստորացման նպատակ ունեին:
Առավել հետաքրքրական և թերևս վտանգավոր է ճնշման մեկ այլ պրակտիկա, որը կարող ենք անվանել «պայքարի գաղութացում»:
Ըստ Պոդրաբինեկի՝ սկսած 1987-ից՝ խորհրդային իշխանությունները հասկացան, որ չեն կարողանում վերահսկել այլախոհական շարժումը և սկսեցին յուրացնել այլախոհական պայքարի տարածքը: 1987-ից սկսած՝ խորհրդային իշխանությունները դեկտեմբերի 10-ին[5] հավաք էին կազմակերպում Պուշկինի հրապարակում: Ըստ էության այդ կերպ նրանք գաղութացնում էին այլախոհական տարածքը:
Սա մի իրավիճակ էր, երբ շարժումը վերահսկելու համար (գուցե՝ փոխարեն) իշխանությունները «կազմակերպում» էին դրանք՝ էլ ավելի սահմանափակելով քաղաքական պայքարի դաշտը:
«Այլախոհները» գրքի ընթերցումը և վերաիմաստավորումը ներկայիս համատեքստում կարևոր են մի քանի առումներով: Հեղինակի ինքնակենսագրությունը երևան է հանում ուշ խորհրդային համակարգի խոցելիությունը և միաժամանակ դրանում այլախոհ քաղաքացիների գործունեության հեռանկարների շրջանակը: Այլախոհական պայքարը՝ իր ձևավորման, զարգացման, հակասությունների և անձնական փորձառությունների շրջանակներում դիտարկելը կարևոր է և կարող է օգնել՝ հասկանալու, թե ի՞նչ հնարավորությունների դաշտում կարող են գործել քաղաքացիները, հանրային խմբերը, երբ կա հակադրություն հեգեմոնիկ համակարգի հետ, երբ պայքարի մեխանիզմները բավարար արդյունավետ չեն գերիշխանության ձևերը հաղթահարելու համար, մյուս կողմից էլ առկա է համակարգի իշխանական պրակտիկաները վերարտադրելու վտանգը:

[5] *Դեկտեմբերի 10-ը 1950 թ. ՄԱԿ-ի կողմից հռչակվել է Մարդու իրավունքների միջազգային օր՝ որպես 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման հիշատակության օր:*

Գրականություն

1 | Հարությունյան, Վ. (2014) *Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում:* Երևան. Վան Արյան:

2 | Алексеева, Л. (2012) *История инакомыслия в СССР: новейший период.* Москва: Моск. Хельсинк. группа.

3 | Подрабинек, А. (2014) *Диссиденты.* Москва: АСТ.

4 | Подрабинек, А. (1979) *Карательная медицина.* Нью-Йорк: Хроника.

ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՈՒՄ ԵՎ ԱԿՏԻՎԻԶՄ

Նարինե Խաչատրյան

Նարինե Խաչատրյանը հոգեբանական գիտությունների թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2006 թ. ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետում: 2011 թ. ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնի վարիչն է: Այժմ նաև ԵՊՀ «Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիայի գիտական ղեկավարն է: Գրել է գիտական աշխատանքներ անձի, մշակույթի և սոցիալական համատեքստի, անձի արժեքային կողմնորոշումների և տնտեսական վարքի փոխառնչությունների մասին:

Ն. Խաչատրյանն իր տեքստում ներկայացնում է արժեքների սոցիալ-հոգեբանական հետազոտության մեթոդաբանությունների տեղայնացման փորձը Հայաստանում՝ նկարագրելով մեզանում մշակութային և անհատական արժեքային կողմնորոշումները և դրանց փոխառնչությունները փոփոխության հնարավորության հետ:

Արժեքները և փոփոխության հնարավորությունը հայաստանյան հասարակությունում. սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն

Հանրային փոփոխությունն իբրև արժեքային փոփոխություն

Շալոմ Շվարցի հետազոտական մոդելի շրջանակներում արժեքները սահմանվում են իբրև իդեալներ, որոնց մարդը ձգտում է, սակայն դրանք հանդես են գալիս նաև իբրև նորմատիվ վարքի կողմնորոշիչներ, որոնց մարդը պետք է հետևի (Schwartz 2006a, 2009): Շվարցը տարանջատում է արժեքների երկու մակարդակ՝ մշակութային և անհատական (Schwartz 2011): Արժեքների համեմատական ուսումնասիրությանն ուղղված «Արժեքների համաշխարհային հետազոտությունը» ելնում է միայն մշակութային արժեքներից (Inglehart, Welzel 2005): Ըստ այդմ, անհատը տվյալ հասարակության արժեքների կրողն է, ուստի արժեքների բնութագիրը հասարակական վերլուծությունների մակարդակում արդեն իսկ բավարար է[1]:

[1] *«Արժեքների համաշխարհային հետազոտության» հեղինակները՝ Ռ. Ինգլհարթը և Հ.Վելզերը, արդիականացման տեսության ներքո վերլուծում են հասարակությունների զարգացման միտումները: Արդիականացման տեսություն ասելով՝ նկատի ունեն, թե տնտեսական զարգացումը ի՞նչ հնարավոր փոփոխությունների է հանգեցնում արժեքային կողմնորոշումներում, այսինքն՝ որքանո՞վ է երկրների տնտեսական վիճակի բարելավումը բերում արժեքային փոփոխությունների: Առաջին չափման մի բևեռում ավանդական արժեքներն են, մյուսում՝ սեկուլյար-ռացիոնալ արժեքները: Այստեղ, համաձայն արդիականացման տեսության, նկատվում է հստակ օրինաչափություն. տնտեսական զարգացմանը զուգահեռ հասարակություններն ավանդական արժեքներից անցնում են դեպի սեկուլյար-ռացիոնալ արժեքների: Ավանդական արժեքների ներքո կարևորվում են ավանդույթները, կրոնը, իսկ սեկուլյար-ռացիոնալ արժեքների պարագայում՝ ռացիոնալությունը, գիտությունը, և այն, ինչ առհասարակ բնորոշում է աշխարհիկ հասարակությանը: Եթե դիմենք տնտեսական հասարակարգերի տարաբաժանմանը, ապա ավանդական արժեքները հատուկ են ագրարային հասարակություններին, իսկ սեկուլյար-ռացիոնալ արժեքները՝ արդյունաբերական հասարակություններին:*
Երկրորդ չափումն ընդգրկում է գոյապահպանման արժեքը և ինքնարտահայտման արժեքը: Գոյապահպանման արժեքի շրջանակներում կարևորվում է տնտեսական և ֆիզիկական անվտանգությունը: Ինքնարտահայտման արժեքի դրսևորմամբ մարդկանց մտահոգում են կյանքի որակը, բնապահպանությունը, էսթետիկան, ինքնուրույնությունը, խոսքի ազատությունն ու այլ արժեքներ: Այս չափման դեպքում վերոնշյալ օրինաչափությունը խախտվում է. փոփոխություններին նպաստում է ոչ այնքան տնտեսական զարգացումը, որքան՝ քաղաքացիական մտահոգությունները: Երբ հասարակության համար կարևոր են դառնում քաղաքական և քաղաքացիական հիմնահարցերը, գոյապահպանման արժեքներից անցում է կատարվում ինքնարտահայտման արժեքների: «Արժեքների համաշխարհային հետազոտության» շրջանակներում մենք դիտարկել ենք հայաստանյան հասարակության արժեքային փոփոխությունների դինամիկան 1997, 2008 և 2010 թվականների կտրվածքով: Ըստ այդմ, այս հետազոտական տվյալների համաձայն՝ չնայած միտված լինելով դեպի սեկուլյար-ռացիոնալ արժեքները՝ հայաստանյան հասարակությունը առավելապես գոյապահպանման արժեքների չափման տիրույթում է: Ավանդական և սեկուլյար-ռացիոնալ արժեքների տիրույթում փոքր շարժ է նկատվում դեպի ավանդական արժեքներ, սակայն ոչ բոլոր չափանիշներով: Օրինակ՝ ընտանեկան կյանքում գերակշռում են ավանդական արժեքները՝ ընտանեկան հիերարխիան կամ ամուսնալուծության նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքը: Իբրև այս արժեքների ինդիկատոր՝ հանդես է գալիս գենդերային դերերի փոփոխությունը:

Այս պարագայում բաց է թողնվում կարևոր՝ սոցիալ-հոգեբանական շերտը, որ հնարավոր է բացահայտել անհատի արժեքային կողմնորոշումների ուսումնասիրությամբ:
Ըստ Շվարցի՝ մշակութային և անհատական արժեքները ձևավորման տարբեր հիմքեր ունեն: Մշակութային արժեքները ձևավորվում են հասարակության պահպանման և զարգացման պահանջներից, այսինքն՝ դրանք նպատակներ են, որոնք կապված են հասարակության հետ և հանդես են գալիս իբրև իմպերատիվներ՝ հասարակությունն իբրև ամբողջություն պահպանելու համար: Անհատական արժեքները հիմնվում են անհատի կենսաբանական և սոցիալական պահանջմունքների վրա՝ մարդու համար կրելով մոտիվացիոն և իմաստային նշանակություն: Սրանք դիտարկվում են իբրև ցանկալի նպատակներ (Schwartz 2006b, 2011):
Շվարցի հետազոտական մոդելում առանձնացվում է մշակութային յոթ արժեք: Դրանք դասակարգված են ըստ տարբեր չափումների՝ միմյանց հակադրության միջոցով (Schwartz 2006a): Առաջին չափման մեջ են *ինտելեկտուալ* և *հուզական ինքնավարությունն* ու *խմբային ընդգրկվածությունը* (embededness), որոնք դիտարկվում են իբրև հակադիր արժեքներ: Երկրորդ չափումը ներառում է *էգալիտարիզմը* և *հիերարխիան*, երրորդը՝ *ներդաշնակությունը* և *տիրապետումը* (mastery): *Ներդաշնակությունը* հղում է շրջապատող միջավայրի և բնության հետ մարդու փոխկապվածությանը, մինչդեռ *տիրապետումը*՝ մարդու՝ բնության հանդեպ սպառողական դիրքորոշմանը, բնության շահագործմանը: *Ինքնավարության* դեպքում տնտեսական զարգացումն ավելի բարձր է: Բարձր *ինքնավարությունը* նշանակում է նաև, որ ցածր է կոռուպցիայի ցուցանիշը: Կոռուպցիայի ցուցանիշը *խմբային ընդգրկվածության, անդամակցության* և *հիերարխիա* արժեքների պարագայում ավելի բարձր է: Այն կարևոր է նաև ժողովրդավարական հասարակությունների համար:
Համագործակցելով Շվարցի հետ՝ մեր թիմը հարմարեցրել է հետազոտական գործիքը և մշակել այն հայերենով: Առաջին փուլում տվյալներ ենք հավաքագրել ուսանողներից և դպրոցի ուսուցիչներից՝ նախապես մշակված ընտրանքի համաձայն: Հայաստանը մշակութային արժեքների այս երկբևեռ բաժանումներում զբաղեցնում է միջին դիրք գրեթե բոլոր պարագաներում, սակայն «*ինքնավարություն* և *խմբային ընդգրկվածություն*» չափման առանցքում թեքված է դեպի *ընդգրկվածությունը*:
Մեր կողմից իրականացրած հետազոտության երկրորդ փուլն ուղղված է եղել անհատական արժեքների ուսումնասիրությանը: Ընտրանքն այս փուլում ընդգրկել է 803 մասնակից՝ տարբեր տարիքային խմբերից: Այն կազմվել է քվոտային սկզբունքով՝

ընդգրկելով արական և իգական սեռի ներկայացուցիչների Երևանից և մարզերից: Մարզերն են՝ Շիրակը, Վայոց Ձորը, Սյունիքը և Արմավիրը:
Այս մոդելի շրջանակներում անհատին բնութագրող 10 արժեքներ են առանձնացվել, որոնք խմբավորված են ըստ հեռավորության աստիճանի (Schwartz 2006b):

1 **Ինքնահաստատման արժեքներն ընդդեմ ինքնահաղթահարման արժեքների.**
ինքնահաստատման արժեքն ունի ավելի էգոցենտրիկ բնույթ՝ ուղղված է սեփական հետաքրքրություններին, շահերին: Երկրորդն առավելապես ալտրուիստական և վերանհատական է: Ինքնահաստատման արժեքի խմբում են *ձեռքբերումները*, *իշխանությունը*, ինքնահաղթահարման արժեքի խմբում՝ *ունիվերսալիզմը* (սոցիալական արդարություն, հավասարություն), *կամեցողությունը*: Կամեցողության (benevolence) դեպքում շեշտադրվում է սեփական խմբի (ingroup), հարազատի բարօրությունը: *Ունիվերսալիզմը* շեշտադրում է այլ խմբերի և ընդհանուր շահի, ընդհանուր բարօրության հարցերը: *Ձեռքբերումները* հղում են սոցիալական դիրքի, սոցիալական ակնկալիքների համապատասխանությանը, իսկ իշխանությունը ազդելու, ղեկավարելու, կառավարելու հնարավորությունն է:

2 **Պահպանողական արժեքներն ընդդեմ փոփոխություններին բաց լինելու արժեքների.**
պահպանողական արժեքները ներառում են *կոնֆորմության*, *ավանդականության* և *անվտանգության* արժեքները: *Կոնֆորմությունը* սոցիալական սպասումներին հակասող կամ ուրիշներին վնասող գործողությունների զսպումն է: *Ավանդականությունը* մշակութային և կրոնական սովորույթների պահպանումն է և հարգանքը դրանց նկատմամբ: *Անվտանգությունը* հասարակական հարաբերությունների և սեփական անձի անվտանգության և կայունության ապահովումն է: Սրան հակառակ՝ փոփոխություններին բաց լինելու արժեքներն են *հեդոնիզմը*, *ինքնուրույնությունը* և *ստիմուլյացիան*:

1997-ի հետազոտության տվյալների համեմատությամբ նկատվում է կնոջ և տղամարդու միջև աճող հավասարության միտում: Մյուս կողմից ավանդականության մեկ այլ ինդիկատոր՝ ազգային հպարտության և կրոնական ինքնության զգացումը 1997-ի համեմատությամբ սկսում է ավելի կարևորվել՝ սկած 2008-ից և 2010-ից: Գոյապահպանման և ինքնարտահայտման արժեքների չափման տիրույթում 2008 և 2010 թթ. փոփոխության միտում կա դեպի գոյապահպանման արժեքներ: Օրինակ՝ երեխաների դաստիարակության հարցում կարևորվում է աշխատասիրությունը, մինչդեռ այն որակները, որոնք կապված են ինքնարտահայտման արժեքի հետ՝ ինքնուրույնություն և երևակայություն, չեն կարևորվում: Ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ մեզանում կարևորվում են ֆիզիկական-տնտեսական անվտանգության հարցերը, իսկ փոխհարաբերություններում՝ զգուշավորության և անվստահության դիրքորոշումները:

Ինքնուրույնությունը մտքի և ինքնարտահայտման ազատությունն է, *ստիմուլյացիան*՝ նոր տպավորության և փոփոխության բնական, ֆիզիոլոգիական պահանջմունքը, *հեդոնիզմը*՝ հաճույք կամ հուզական բավարարվածություն ստանալու պահանջմունքը:

Այս արժեքներն են, որոնց արտահայտվածությունը մենք ուսումնասիրել ենք Հայաստանի քաղաքացիների շրջանում: Հետազոտությունը ցույց տվեց (Խաչատրյան, Մանուսյան և այլք 2014), որ առավել արտահայտված է կոնֆորմության արժեքը, այնուհետև կամեցողության արժեքը (սեփական խմբի նկատմամբ ուշադրությունը, հոգատարությունը): Երրորդ տարածված արժեքը անվտանգությունն է, իսկ չորրորդը՝ ձեռքբերումներ ունենալու արժեքը: Այս մոդելի շրջանակներում կոնֆորմությունը և անվտանգությունը պահպանողական արժեքների խմբում են, իսկ կամեցողությունը՝ իբրև ինքնահաղթահարման արժեք, սահմանակից է պահպանողական արժեքներին: Փաստորեն, հետազոտված խմբի վերաբերմամբ կարող ենք ասել, որ արտահայտիչ և գերակշռող են պահպանողական արժեքները:
Եթե դիտարկենք արժեքների արտահայտվածության և տարիքային պատկանելության միջև կապը, ապա կնկատենք, որ անվտանգության արժեքի կարևորությունը երիտասարդների շրջանում նվազում է: Մինչդեռ ձեռքբերումն իբրև արժեք երիտասարդների համար դառնում է գերակա: Ինքնուրույնության արժեքը, որը փոփոխություններին բաց լինելու արժեքների շարքում է, մայրաքաղաքի երիտասարդների համար սկսում է կարևորվել՝ հայտնվելով կարգի չորրորդ տեղում: Սակայն կան որոշ տարբերություններ մարզերի և մայրաքաղաքի երիտասարդների միջև. մայրաքաղաքի երիտասարդների մոտ անվտանգության արժեքը (ստատուս-քվո պահելը) վառ արտահայտված չէ: Միևնույն ժամանակ երևանաբնակ կանանց շրջանում սկսում է կարևորվել ձեռքբերման արժեքը՝ ի հակադրություն, օրինակ, կոնֆորմության ու կամեցողության, որոնք առավել արտահայտված են մարզային ռեսպոնդենտների շրջանում:
Շվարցը վերլուծում է նաև արժեքային կողմնորոշումների միջև հարաբերակցության խնդիրը դինամիկ կառուցվածքի տեսանկյունից (Schwartz 2006b): Այդ հարաբերությունների կազմավորող սկզբունքներից է տագնապի առկայությունը: Համաձայն այդ վերլուծության, ինքնահաստատման և պահպանողական խմբի արժեքներն ավելի շատ ուղղված են տագնապի նվազմանը. որքան բարձր է տագնապային ֆոնը, այնքան այս արժեքներն ավելի ամուր են ընկած մարդու վարքի հիմքում: Այսպես օրինակ, մարդիկ ձգտում են խուսափել կոնֆլիկտներից (կոնֆորմություն), պահպանել ներկայիս կարգուկանոնը (ավանդականություն, անվտանգություն) կամ

վերահսկել հնարավոր վտանգները (իշխանություն): Մյուս խմբերի արժեքները տագնապով պայմանավորված վարքի ձևեր չեն ենթադրում: Ձեռքբերման արժեքը կարող է և տագնապի վերահսկման վարքաձևի հանգեցնել կամ ուղղակի ամրապնդել մարդու կոմպետենտության զգացումը: Այս առումով Շվարցը հիշատակում է հոգեբանության մեջ ուսումնասիրված ինքնակարգավորման երկու հիմնարար վարքաձևեր՝ կանխարգելում (prevention) և առաջմղում (promotion) (Higgins 1997): Առաջինի դեպքում մարդու գործողությունն ուղղված է վտանգի կանխարգելմանը, երկրորդի դեպքում՝ որևէ բանի ձեռքբերմանը: Առաջին վարքաձևը հղում է խուսափելուն, իսկ երկրորդը՝ ստանալուն: Ինքնահաստատման և պահպանողական խմբի արժեքները կորելացվում են կանխարգելման, խուսափման վարքագծի հետ, իսկ ինքնահաղթահարման և փոփոխությունների բաց լինելու արժեքները՝ առաջխաղացման, խթանման հետ:

Արժեքային կողմնորոշումների միջև հարաբերակցության մյուս սկզբունքի հիմքում է ընկած այն, թե որքանով են արժեքները բավարարում անհատական հետաքրքրությունները և շահերը, և որքանով՝ խմբի, այլ կերպ ասած՝ որքանով են ուղղված դեպի անձը՝ էգոցենտրիկ են իրենց բնույթով (ինքնուրույնություն, ձեռքբերումներ), և որքանով՝ դեպի խումբը, կոլեկտիվիստական բնույթ ունեն (կոնֆորմություն, կամեցողություն):

Եթե ելնենք արժեքային կողմնորոշումների դինամիկ հարաբերակցության վերլուծությունից, ապա մեր ստացած տվյալների հիման վրա կարելի է ասել, որ ձեռքբերման և կամեցողության արժեքների միջև առկա է հոգեբանական լարում՝ դրդապատճառների միջև ներքին կոնֆլիկտ, հատկապես երիտասարդների պարագայում: Մի կողմից կա ձեռքբերումներ, նվաճումներ ունենալու, մյուս կողմից՝ ընտանիքի հանդեպ առավել հոգատար լինելու ձգտումը: Լարում կա նաև կոնֆորմության և ինքնուրույնության արժեքների միջև. մի կողմից՝ ազատ խոսք, միտք, ընտրություն, նոր մարտահրավերների հաղթահարում, իսկ մյուս կողմից՝ խմբի ակնկալիքներ, տագնապ կորուստներ ունենալուց, խուսափում պատժից:

Փոփոխության հնարավորություն

Ուսումնասիրության առավել նշանակալի արդյունքներից էր, որ կոնֆորմության արժեքը, կարծես, երկրորդային ձևով ամրապնդվում է. եթե չես վստահում սոցիալական ինստիտուտներին և «ուրիշներին», այլ վստահում ես մտերիմ ներիդ, ապա մտերիմ կապերը պահպանելու համար գործում ես

տվյալ «հարազատական» խմբի ակնկալիքներին համապատասխան: Այսինքն՝ անորոշության մեջ երկրորդային ազդեցությամբ մարդը սահմանափակվում է իր խմբի սահմաններով: Այսպիսով՝ կարող ենք ուրվագծել փոփոխությունների հնարավորությունը՝ ըստ հետևյալ գործոնների.

- Բնականոն փոփոխություն՝ պայմանավորված սերնդափոխությամբ. ընտրանքային այս հետազոտությունը ցույց տվեց արժեքային կողմնորոշումների փոփոխություններ երիտասարդների շրջանում: Շատ գիտնականներ, որոնք ուսումնասիրում են արժեքային կողմնորոշումները, նշում են, որ մշակութային արժեքների փոփոխությունը շատ դանդաղ է տեղի ունենում (Ինգլհարթ 2000, Հոֆսթեդե 2001, Շվարց 2009 և այլք): Առօրյա պրակտիկաներում փոփոխություններն ավելի արագ կարող են տեղի ունենալ: Օրինակ, հագուստի կամ ուտելիքի հարցում մենք ավելի շուտ կնմանվենք Արևմուտքի մարդուն, սակայն մշակութային արժեքները խորքային են և դանդաղ փոփոխվող:

- «Արժեքային լարումներ» հասարակության տարբեր կառույցների միջև, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում և ներուժ ունեն՝ հանգեցնելու փոփոխությունների: Ակնհայտ է, որ ինստիտուցիոնալ կառույցների մեջ կան արժեքային տարբերություններ. բանակում միջանձնային հարաբերություններում իբրև արժեք գերակշռում է *հիերարխիան*, սակայն կարևոր է, որ կրթական հաստատություններում նշանակալի դեր ունենա *ինքնուրույնության* արժեքը՝ ի հակադրություն *կոնֆորմության*: Եթե հասարակության մեջ տարբեր սոցիալական ինստիտուտներ ունենան տարբեր արժեքներ, ապա կարելի է ակնկալել փոփոխություններ:

- Փոփոխության աղբյուր է հասարակության տարբեր խմբերի միջև արժեքային կողմնորոշումների տարբերությունը. որքան բազմազան լինեն արժեքային կողմնորոշումները, այնքան հասարակությունն ավելի դինամիկ կզարգանա:

- Փոփոխությունների տեսանկյունից կարևոր են նաև իրավիճակային, համատեքստային գործոնները: Ուստի կարևոր է ստեղծել մարդուն ոչ թե ճնշող, այլ խթանող միջավայր և հարաբերությունների դաշտ: Օրինակ՝ դպրոցներում կամ բուհերում հարաբերությունների կարգավորման մեխանիզմ պետք է լինի ոչ թե պատիժը, այլ խրախուսանքը: Սոցիալական հարաբերություններում, պրակտիկաներում անհրաժեշտ են նոր դիտանկյուններ: Ճանաչողական սխեմաները, որոնցով մտածում և մեկնաբանում ենք երևույթները, անհրաժեշտաբար կարիք ունեն փոփոխվելու:

Գրականություն

1 | Խաչատրյան Ն., Մանուսյան Ս. և այլք (2014) *Մշակույթ, արժեքներ, համոզմունքներ. վարքի կողմնորոշիչները ժամանակակից հայ հասարակությունում*: Երևան. հեղ. հրատ.:

2 | Higgins, T. (1997) Beyond Pleasure and Pain. *American Psychologist, 52:* 1280-1300.

3 | Hofstede, G. (2001) *Culture's Consequences Comparing Values, Behaviors, Institutions and Organizations across Nations.* Thousand Oaks, CA: Sage

4 | Inglehart, R., Baker W. E. (2000) Modernization, Cultural Change, and the Persistence of Traditional Values. *American Sociological Review*, *65:* 19-51.

5 | Inglehart, R., Welzel Ch. (2005) Modernization, *Cultural Change, and Democracy.* New York: Cambridge University Press.

6 | Schwartz, Sh. (2006a) A Theory of Cultural Value Orientations: Explication and Applications. *Comparative Sociology*, 5: 137-182.

7 | Schwartz, Sh. (2006b) Les Valeurs de Base de la Personne. Théorie, Mesures et Applications [Basic Human Values: Theory, Measurement, and Applications]. *Revue Francaise de Sociologie*, *42:* 249-288.

8 | Schwartz, Sh. (2009) Culture Matters: National Value Cultures, Sources and Consequences. In Robert S. Wyer, Chi-yue Chiu, Ying-yi Hong (eds.) *Understanding Culture: Theory, Research, and Application*. NY: Tylor and Francis Group, 127-150.

9 | Schwartz, Sh. (2011) Values: Individual and Cultural. In S. M. Breugelmans, A. Chasiotis, & F. J. R. van de Vijver (eds.), *Fundamental Questions in Cross-Cultural Psychology.*
Cambridge: Cambridge University Press, 463-493.

Սոնա Մանուսյան

Սոնա Մանուսյանը հոգեբանական գիտությունների թեկնածուի կոչումը ստացել է 2011 թ. Երևանի պետական համալսարանում, որտեղ նաև դասավանդում է: Հետազոտական տարբեր նախագծերով եղել է Մյունխենի, Միչիգանի համալսարաններում, ինչպես նաև Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքական գիտությունների դպրոցում: Հետազոտական հետաքրքրությունների շրջանակն են կազմում ինքնագիտակցության հարցերը, անհատականի և հասարակականի առնչությունները, սոցիալական տարածքների ու խմբային սահմանների կառուցման մեխանիզմները: Վերջին տարիներին կենտրոնացած է քաղաքացիական նախաձեռնությունների ուսումնասիրության վրա:

Ս. Մանուսյանը հանրային գործընթացներին մոտենում է սոցիալ-հոգեբանական տեսանկյունից: Նա ավելի շատ անդրադառնում է միջսուբյեկտային շերտին, այսինքն՝ այն ամենին, ինչ կատարվում է անհատների կամ անհատի ու հասարակականի միջև: Մանուսյանը համարում է, որ սոցիալական գործընթացներում անհրաժեշտ է հաշվի առնել հոգեբանական գիտելիքը, եթե ցանկանում ենք ավելի գիտակցված ու իրազեկ քայլեր ձեռնարկել: Այս նյութում նա ներկայացնում է ինչպես կարևոր տեսական հասկացություններ, այնպես էլ կիսվում Հայաստանի հասարակության սոցիալ-հոգեբանական բնութագրի մասին իր դիտարկումներով՝ հիմնվելով տարբեր տարիներին իրականացրած հետազոտությունների վրա:

Հայաստանում արժեքային և ինքնության կողմնորոշումները ակտիվիզմի հետ առնչության մեջ

Ինքնություն հասկացությունը

Ինքնությունն այն հասկացություններից է, որոնք և՛ հասարակագետները, և՛ քիչ թե շատ տեղեկացված քաղաքացիները հաճախ են գործածում, և հենց այդ չափազանց շատ օգտագործվելու պատճառով դրանք ինչ-որ տեղ բովանդակությունից զրկվում են կամ ձեռք են բերում անորոշ իմաստ:

Մեր հասարակության մասին խոսելիս շատ ենք գործածում այս եզրը, այն տերմինաբանորեն շահարկված է ոչ միայն մեր կողմից, այլև առհասարակ հասարակագիտության մեջ: Արդեն կան ինքնության՝ որպես եզրի օգտակարությունը կասկածի առնող քննադատություններ, քանի որ այն շատ տարբեր, նույնիսկ իրար հակասող իմաստներ է ձեռք բերել: Օրինակ՝ հետևյալ երկու դատողություններն էլ ինքնության մասին են.

- Ինքն իրեն նույնական, հավասար, կայուն լինելը, նույնը լինելու վիճակը:
- Այն, ինչ անընդհատ փոփոխվում է, և ես կարող եմ այն կառուցել:

Ինքնությունը մեզանում դարձել է սիրելի բառ հատկապես ազգայինի համատեքստում, և հաճախ «ազգային ինքնություն» բառակապակցությունն ասվում է որպես ինքնըստինքյան հասկանալի բան ու այն զգացումով, կարծես բոլորին պարզ է, թե դա որն է, ինչ բովանդակություն ունի: Բայց պետք է հասկանանք, թե ինչ նկատի ունենք: Ե՛վ ազգայինի, և՛ ինքնության հասկացությունները գերգործածված են ինչպես տերմինաբանորեն, այնպես էլ առօրյա, հանրածանոթ մակարդակում: Հետաքրքիր է՝ որքան էլ իշխանության ու քաղաքացիների միջև հեռավորությունը մեծ է, միևնույն է ինքնության մասին իշխանության կողմից գործածվող *էսենցիալիստական (էութենապաշտական)* բառապաշարը («հայի տեսակը», «հայի գենը») դեռևս շարունակում է ավելի լավ ընկալվել հասարակության մեջ, որովհետև էսենցիալիստական ոգին ավելի հասկանալի է ներկայիս առօրեական ըմբռնման մեջ: Էսենցիալիզմը որևէ սուբյեկտի (անհատի, ազգի) որոշակի հատկանիշները որպես բնույթ, նրան բնորոշ, կայուն կամ տեսակային դիտարկելն է: Օրինակ՝ երբ ինչ-որ խնդիր կամ

առավելություն, ազգի գեներով, այլ ոչ թե, ասենք, սոցիալական, պատմաքաղաքական կամ իրավիճակային գործոն ներով են բացատրվում: Մարդիկ իրենց առօրյա դատողություններում ևս հաճախ առավելապես էսենցիալիստական են: Օրինակ՝ հաճախ մարդիկ հակված են դիմացինի վարքը բացատրել նրա ներքին հատկանիշներով (այսինչ բնավորությունն ունի, դա նրա բնույթն է, կամ տղամարդիկ ավելի ուժեղ են մաթեմատիկայից և այլն): Ուստի եթե ուզում ենք փոխել մտածողություն, դիրքորոշումներ, դիսկուրս (օրինակ՝ ազգայինի մասին), մենք պետք է մտածենք, թե այսպես դատող մարդու հետ ինչպե՞ս խոսել, որ նա մեզ հասկանա, մտափոխվի: Սա հեշտ չէ: Լայն շերտերն ավելի արագ են ընկալում այն, ինչ պարզ է, միատարր է և արդեն իսկ մարդկանց դատողությունների սխեմայի ներսում է: Սա չի նշանակում, որ պետք է այդ սխեմաներով առաջ շարժվել, բայց սեփական սխեմաները առաջարկելիս սա պետք է հաշվի առնել: Մենք չենք կարող ուղղակի ասել, որ ազգը կամ հայ ինքնությունը ձեր իմացածը չէ և սպասել, որ միանգամից ընդունելի կդառնանք:

Ազգային ինքնությունը վերացական բառակապակցություն է, բայց գործուն, շատ կոնկրետ մտավոր կառույց է: Քանի որ այն հոգեբանորեն կապում է քեզ արմատներին, տալիս է անվտանգության, ինչպես նաև լավը, կարևորը լինելու զգացում՝ ազգին ու նրա պատմությանը, ուրեմն և ավելի մեծ ու ավելի տևական մի բանի մաս լինելու շնորհիվ: Ստացվում է, որ այն իրավիճակներում, որտեղ վտանգվածության, անվստահության, անորոշության զգացում կա, ազգային ոլորտի բառերը որպես ազդակ բավական գործուն են: Ուրեմն չպետք է զարմանանք, որ մարդիկ, «այսօրվա դարդերը թողած», հին Հայաստանի կերպարն են գովում: Ու որ այդ բառերով իշխանությունները դեռևս կարողանում են մարդկանց գիտակցության վրա ազդել: Դա հենց կապ ունի այսօրվա դարդերի հետ և դրանք հոգեբանորեն լուծելու որոշակի ձևերի հետ: Նրանք իսկապես թողնում են այսօրվա խնդրահարույց Հայաստանը, ու հղում են ինչ-որ կարծեցյալ, այլ, հզոր, վեհ, կոնկրետ ժամանակից ու տարածքից անկախ երկրի մտապատկերի: Մարդկանց համար ազգային ինքնության հետ կապված լինելը հաճախ փոխհատուցող գործառույթ է իրականացնում: Ազգային ինքնաբնութագրումների վերաբերյալ մի հետազոտություն էր արվել հետխորհրդային տարբեր երկրներում: Ու պարզվել էր, որ այնպիսի մարդկային ինքնավերագրումներ, ինչպիսիք են *հյուրասեր*, *ջերմ հարաբերություններով*, *ավանդապաշտ* լինելը (ու դրանք որպես հենց իրենց ազգի յուրահատկություն դիտարկելը), կազմում են ազգային ինքնության հիմնական բնութագիր այն երկրներում, որտեղ ցածր է սոցիալ-տնտեսական

զարգացվածությունը: Ծանոթ բնութագրումներ են, այնպես չէ՞: Այսպես իրենց բնութագրել էին, օրինակ, ղրղզները ու Միջին Ասիայի այլ ազգեր, ում հետ մենք մեզ բոլորովին նման չենք համարում: Թերևս այն հասարակությունները, որոնք ունեն բարձր սոցիալ-տնտեսական զարգացվածություն, դրական ազգային ինքնագնահատականի համար կարիք չունեն ազգայինը «զուտ մարդկային» տեսակետից նկարագրելու: Այդպիսի հասարակություններում ավելի շատ նշվում են երկրի ներկա և ավելի օբյեկտիվ ցուցանիշներ: Ինչպես օրինակ, ինձ հետ պատահած մի դիպվածում, երբ հյուրանոցում սենյակի հոսանքը կարճ միացումից անջատվել էր, աշխատողին ասացի, թե պատճառը թեյնիկն է (թեև իսկապես դա չէր, իմ տարած չինական սրճեփն էր): Նա ինձ հաստատակամորեն պատասխանեց. «Դա անհնար է, այն գերմանական է»: Սա գերմանական գիտակցության, գերմանականի հանդեպ վերաբերմունքի մաս է, ոչ թե պարզապես թեյնիկի մասին դրական կարծիք:

Ազգային ինքնությունը, ազգին պատկանելության զգացումը ամբողջական իմաստով նաև ենթադրում է, որ մարդն իր պետության հետ նույնականանա, դրա հիմնական ինստիտուտները համարի իր պատկանելության տարածքը, իրենը: Օրինակ՝ մեզ մոտ ասում են՝ աջակցենք հայրենական արտադրողին, բայց բառերով ինչ-որ բաներ համոզելն անհնար է: Մարդը պետք է իր առօրյայում դրա օգտակարությունը տեսնի: Սակայն մյուս կողմից, ինքնության մեջ կարևոր է ոչ միայն և ոչ այնքան օբյեկտիվ ճշմարտությունը ու գիտելիքները, որքան այն ընտրողաբար վերցված հատկանիշները, որոնք մարդկանց թույլ են տալիս իրենց զգալ «լավ» կամ «մեծ բանի» մաս:

Ազգային ինքնության մի բաղադրիչ է նաև ազգային պատկանելությունից եկող ինքնագնահատականը դրական պահպանելը: Այն դեպքում, երբ դա գործնականում չի ստացվում ուղղակիորեն, մարդիկ սիմվոլիկ և վիրտուալ գործողություններով են վերահմաստավորում կամ վերաձևակերպում, թե ինչ է հայրենիքը, այդ թվում՝ տարածական առումով: Ինչն է հետաքրքիր. չնայած միջին քաղաքացին հոգնած է իշխանական դիսկուրսից, շատ լավ հասկանում է, որ իրեն խաբում են, դժգոհ է կամ գոնե գանգատվում է, միևնույն է, այլընտրանքն իր համար ավելի հասկանալի չէ: Այսինքն՝ կյանքի վրա ազդեցության իմաստով իշխանության գործողությունները միգուցե շատ ավելի վատն են, բայց իշխանության վարած դիսկուրսը, օրինակ՝ ազգայինի վեհացումը, իր համար դեռևս ավելի հասկանալի է: Հետևաբար դեռևս ավելի «հաստ» սահմաններ են բնակչության և այն մարդկանց միջև, որոնք

կարծես թե ավելի շատ են իր մասին մտածում (օրինակ՝ քաղաքացիական խմբերի): Դա պայմանավորված է նրանով, որ կա լեզվական մեծ հեռավորություն. բնակչության մեծ մասին հասկանալի չէ քաղաքացիական դիսկուրսը և երկրի վերաբերյալ լուրջ քննադատությունը: Պաշտոնական դիսկուրսը, չնայած իր պարզունակ սխեմաներին, բոլորին հայտնի մանիպուլյացիաներին կամ գուցե հենց դրանց շնորհիվ, դեռևս հաղթող է:

Էսենցիալիզմ և կոնստրուկտիվիզմ

Էսենցիալիզմը, ինչպես արդեն նշեցի, անհատին, խմբին կամ որևէ այլ սուբյեկտին էական, կայուն հատկանիշների տեսակետից բնութագրելն է, դա որպես բացատրական սկզբունք վերցնելը: Այս բառը արևմուտքի հասարակագիտական շրջանակներում մեղադրանք է, գրեթե ռասիզմին հավասար անպատվություն: Մենք էսենցիալիստական ենք, եթե հավատում ենք, որ ռասայից կախված են որոշակի հատկություններ, օրինակ՝ ինտելեկտը: Էսենցիալիստ ենք, երբ ասում ենք «հայի գենը», «թուրքը թուրք է մնում» և նույնիսկ, երբ ասում ենք, որ մարդը ունի անհատական տիպաբանական հատկություններ: Այսպիսով՝ էսենցիալիզմը կարող է լինել հակագիտական ու վտանգավոր: Սակայն մյուս կողմից հենց հոգեբանության մեջ կան որոշակի ճշմարտություններ, որ էսենցիալիստական են: Հոգեբանությունն, օրինակ, ուսումնասիրում է խառ նվածք, հաշվի է առնում տիպաբանություն՝ անձի մեջ ինչ-որ կողմեր համարելով կայուն և դրան տալով հատուկ նշանակություն անձի զարգացման հարցում: Դրա համար էլ սոցիոլոգներն ու շատ-շատերը հոգեբաններին չեն սիրում, և հոգեբանական տեսակետը հայտնվել է ազգերի ու ազգային գործընթացների ուսումնասիրության, ինչպես նաև գենդերային հետազոտությունների լուսանցքում: Ի տարբերություն սոցիոլոգիայի կամ հասարակագիտության մյուս ճյուղերի՝ հոգեբանությունը գտնում է, որ կան բաներ, որոնք կայուն են, և որ անհատի վարքը ոչ միայն սոցիալականի արդյունք է կամ սոցիումի մեղքը, այլ նաև հենց անհատական կանխատրամադրվածությունների արդյունք: Անձի (նաև խմբերի) փոփոխման դրույթին զուգահեռ կայունությունն ու ներհատուկությունը լեգիտիմ և գիտական հոգեբանական դրույթ են: Այս իմաստով դասական հոգեբանությունը չի համաձայնի, օրինակ, կոնստրուկտիվիստական այն ըմբռնմանը, որում գենդերը և սեռերի միջև տարբերությունները բացառապես կառուցվող բան են, և որը շրջանցում է այն բոլոր տարբերությունները, որ տրված են աղջիկ կամ տղա երեխային հոգեբանորեն ու ֆիզիոլոգիապես, և որոնք կարող ես դիտարկել նրանց ամենավաղ դրսևորումներում՝ դեռ մինչև

սոցիալ-մշակութային շերտին առնչվելը: Կոնստրուկտիվիստական էութենապաշտականի հակառակ բևեռում է, ուր ամեն ինչ համարվում է ստեղծելի, կառուցելի՝ մասնավորապես խոսքային-դիսկուրսիվ միջոցներով: Ավելին, այն համարում է, որ երևույթները և հատկանիշները կառուցված են ի սկզբանե: Հետաքրքիրն այն է, որ ինքնության մասին բանավեճերում մենք ունենք այս երկուսի պայքարը, որը նաև արտացոլվում է Հայաստանում ինչ-որ երևույթներ քննարկելիս: Մենք տեսնում ենք, որ մարդկանց մի մասը գիտենալով թե ակամա ի զեն է վերցնում կոնստրուկտիվիստական մոտեցումը՝ որոշելով, թե ինչպիսին պետք է դարձնել անհատին ու հասարակությանը, մյուսները շարունակում են խոսել անփոփոխության լեզվով: Իհարկե, պարզ է, որ ոչ մի բան անփոփոխ չի մնում: Ու ենթադրենք՝ ինքնությունը հոսուն է, բայց հոսուն ի՞նչ է: Այսօր մեր ազգի մասին մենք շատ ենք ասում բառեր, գիտականացված պիտակներ, բայց եթե ուշադիր լինենք, կնկատենք, որ մենք չենք բնութագրում, այլ ուղղակի անվանում ենք: Մենք ասում ենք, որ այս հասարակությունը փոխակերպվող է, փոփոխվող է, անցումային է, զարգացող է, հետխորհրդային է, գլոբալացման ազդեցության տակ է, ինքնության ճգնաժամ է ապրում, կիսաավտորիտար է, կիսաազատ է, անկայուն դեմոկրատական է և այլն: Բայց այս անվանումները բովանդակությամբ լցված չեն: Ի՞նչ ասել է փոխակերպվող, ո՞ր կետից դեպի ո՞ր կետն ենք փոխվում, ի՞նչն ենք սկզբնակետ վերցնում, ո՞ր պահից սկսած սկսեցինք կոչվել զարգացող: Ընդ որում այս նույն եզրերը կիրառվում են բոլորովին այլ մշակութային ու պատմական պրոֆիլ ունեցող երկրների նկատմամբ (օրինակ՝ Աֆրիկական երկրների): Կամ երբ ասում ենք, որ ազգային ինքնությունը ճգնաժամ է ապրում, ի՞նչ նկատի ունենք, այդ ո՞ր ինքնությունն է, որ առաջ կար, իսկ հիմա ճգնաժամի մեջ է. ինքնության այն մոդելը, որ մշտապես եղել է՝ հիմնված էսենցիալիզմի սկզբունքի վրա, թե՞ այն ինքնությունը, որը մենք ուզում ենք կառուցել, թե՞ այն ինքնությունը, որն այսօր ունենք: Իրականում մենք ունենք տարբեր ազգային ինքնություններ:

Մոլորություններ կամ ինտելեկտուալ թակարդներ ազգի մասին

Մենք հաճախ ենք լսում, թե մեր ազգը այսպիսին է կամ այնպիսին: Ազգին ինչ-որ բաներ վերագրելն ինքնին սովորական խոսակցություն է շատ հասարակություններում: Բայց թե ինչ ենք մենք խոսում մեր մասին, ինձ դա է հետաքրքրում: Հատկապես հետաքրքիր է, թե ինչպես են հասարակության մասին խոսում ակտիվ քաղաքացիական խմբերը կամ ակտիվիստները, որոնք միտված են իրենց պատկերացրած դրական փոփոխությունները բերելու:

Բացասական բացառիկություն

Հասարակությանը ինչ-որ բան համոզելու, մոբիլիզացնելու չհաջողված փորձերի արդյունքում ամեն հերթական հիասթափությունից հետո լսում ենք, թե ինչպես են շատերը, հատկապես՝ ակտիվիստները, հաճախ ասում, թե «ինչպե՞ս կարելի է», «այս ի՞նչ կոնֆորմիստ են հայերը», «ոչխար ազգ ենք» և այլն: Այստեղ կա ճիշտ դիտարկում, այո՛, մեզանում համակերպվելու միտումը բարձր է, այդ մասին վկայում են նաև նոր հետազոտությունների տվյալներ, որոնց ավելի ուշ կանդրադառնամ: Նաև կան վարքային դրսևորումներ, որոնք կարող են նմանօրինակ լինել «ոչխարության» (զուտ նկարագրական իմաստով) հատկանիշին, այն է՝ հոտային գլխիկոր վարքին: Բայց ի՞նչն է այստեղ ինձ ավելի հետաքրքիր թվում: Փաստորեն մենք մեր գործողություններով կոնստրուկտիվիստական ենք, ուզում ենք ինչ-որ բան փոխել (ի դեպ՝ շատ փոխել), բայց մեր բառապաշարով և մտքով, միևնույն է, էսենցիալիստական ենք: Այսինքն՝ երբ ակտիվիստները հուսահատվում են, կրկին դիմում են ավելի սովորական, առօրեական մտածելակերպին՝ «հայերն այսպիսին են» մոտեցմանը: Ուրեմն մենք մի ամբողջ ազգի վերագրում ենք անփոփոխության հատկանիշ: Փոփոխելու չարդարացված սպասումից մենք իհարկե զայրանում ենք ու ոչ այնքան մտածում՝ «լավ, ուրիշ ինչպե՞ս փոխենք, ի՞նչը փոխենք», որքան հակված ենք կարծելու՝ «սրանք փոխվողը չեն»: Հետևաբար սթափ հայացքի համար կարևոր է նայել, թե ինչ կա հայերից ու Հայաստանից դուրս: Կան ակտիվիզմի մասին հոգեբանական բազմաթիվ հետազոտություններ, որոնք ցույց են տալիս, որ հասարակություններում միշտ էլ չմասնակցելու միտումը կազմում է մեծամասնություն, մշտապես շատ փոքր թիվ են կազմել նույնիսկ հաջողված շարժումները. մարդիկ մեծամասամբ գտնում են իրենց կոնֆորմիստական դիրքորոշման համար ինչ-որ արդարացումներ, և սա գլոբալ վիճակագրական նորմ է: Սոցիալական շարժումների սոցիալ-հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ դրանց շատ փոքր մասն է, որ հասնում է հաջողության, ու շատ քիչ քաղաքացիներ են, որ դրանց մասնակցում են՝ և՛ հաջողված, և՛ չհաջողված դեպքերում: Մասնակցելու ու չմասնակցելու մոտիվների միջև ընտրությունը շատ գործոններից է կախված, բայց հիմնականում նժարը չմասնակցելու կողմն է թեքված, ու չպետք է զարմանալ, երբ մարդը չի մասնակցում: Մասնակցությունը հոգեբանորեն բացատրելու էլ ավելի կարիք ունի, քան չմասնակցությունը: Ռիսկը մեծ է, ջանքը՝ շատ, հաջողությունը կիսելու են

բոլորը, այդ թվում՝ չմասնակցողները, այնինչ դժվարություն-ները՝ միայն մասնակցողները: Դրա համար այդ հետազոտություններում ավելի հաճախ հարցադրում են՝ ինչո՞ւ է մարդը մասնակցում, ինչի՞ համար է շարունակում մնալ շարժման մեջ, ու շատ ավելի հազվադեպ՝ ինչո՞ւ մարդիկ չեն մասնակցում: Սա չպետք է համարել հուսահատվելու առիթ կամ հասարակությունն ախտորոշելու հիմք: Մասնակցության ու չմասնակցության մասին խոսելիս իմաստ ունի անդրադառնալ նաև կողմնակի դիտորդի էֆեկտին (bystander effect). մարդկանց մեծ մասը նախընտրում է հնարավորության դեպքում պատասխանատվությունից հրաժարվել ցանկացած հասարակությունում:

Այս «մոլորությունը», երբ *ինչ-որ բան հասարակությունում «չստացվելը» կամ վատ ստացվելը* համարում ենք *ազգի առանձնահատկություն*, ես անվանում եմ *բացասական բացառիկություն (նեգատիվ էքսկլյուզիվություն):* Այսինքն՝ չնայած նեգատիվ ենք խոսում ազգի մասին, սակայն այստեղ էլ այդ թերությամբ ենք ցանկանում յուրահատուկ համարել մեր ազգը: Ու ինչ-որ բան չստացվելը ևս սովորական չէ, այլ բացառիկ է, հայկական է: Մինչդեռ դա սովորական է, բնորոշ հասարակությանը:

«Ոչ նորմալ» հասարակություն

Բացասական բացառիկության հետ է կապված մյուս (մտա)մոլորությունը՝ այն, որ եթե *ազգը չի համապատասխանում ինչ-որ ունիվերսալ կամ ցանկալի մոդելի, չի կարողանում փոխվել, դառնալ այս կամ այն, դա նորմալ չէ:* Սա հատկապես հասարակագետներին բնորոշ մտահոգություն է: Սովորաբար ես նկատում եմ, որ եթե մարդկանց շրջանում չկա փոփոխվելու, մոբիլիզացվելու ցանկություն, մենք դա համարում ենք ոչ նորմալ: Այսինքն՝ նորմալ չենք համարում այն, ինչն իրականում ոչ թե նորմալ չէ, այլ ցանկալի չէ, իդեալական չէ: Քաղաքացիապես ակտիվ խմբերի և անհատների իդեալները ձևավորված են նրա հաշվին, որ նրանք խմբային, արժեքային որոշակի պատկանելություն ունեն, որոնց հասնելու համար սոցիալականացման, կրթության կամ շփման որոշակի ճանապարհ են անցել, որը հասարակության անդամներից շատերը չեն անցել: Հետևաբար նորմալ է, որ հասարակության մեծ մասի համոզմունքների համակարգը բավականին տարբերվում է ակտիվիստական փորձ ունեցողներինից, և որ նրանք փոխվելու մտադրություն չունեն:

Մի խոսքով այն, ինչ մեր իդեալին չի համապատասխանում, գուցե վատ է, բայց աննորմալ չէ: Երբեմն մեզանում շահարկվում են կլինիկական տիպի բնութագրերը (հիվանդ հասարակություն և այլն): Եթե նույնիսկ այդ պահին դրանք օգնում են հասարակական խնդրի մասին խոսելուն կամ պարզապես հերթական զայրույթը լիցքաթափելուն, հաջորդ քայլին խանգարում են բուն խնդիրը հասկանալուն: Որովհետև հենց ախտորոշեցինք, անվանեցինք, մենք այլևս հետաքրքրված չենք որևէ բան անելով՝ կարծելով, թե ոչինչ անել հնարավոր չէ: Մանավանդ ինտելեկտուալ մարդկանց շատ բնորոշ է ընկնել հետևյալ երկու ծայրահեղություններից մեկը. մի կողմից սոցիոլոգիզմի գիրկը, երբ մենք սպասում ենք, որ կամայական բան սոցիումի, միջավայրի արդյունք է, որ կարելի է փոխել, և մենք մի տեսակ անտեսում ենք այն հոգեբանական օրինաչափությունները, որոնք կարող են ընկած լինել մարդկանց վարքի հիմքում: Մյուս կողմից երբ մենք ամեն ինչ փորձում ենք բացատրել հոգեբանական գործոններով՝ մի մեծ հանրության կարող ենք վերագրել հատկանիշ, որը անհատական մակարդակի հատկանիշ է: Օրինակ՝ հայերի դրական ինքնագնահատականի մեջ առկա է «մենք խելացի ազգ ենք» պատկերացումը: Այնինչ խելացին անհատական հատկանիշ է, ու հասկանալի չէ, թե խելացի ազգ ասելով ի՞նչ նկատի ունենք՝ խելացի մարդկանց մեծ թվակազմը այս ազգում, թե՞ ամեն հայի մեջ ինչ-որ խելացիություն, որն իբր տարբեր է կամայական այլ ազգից: Կարելի է բերել նաև բացասական օրինակ, երբ հաճախ ասվում է, որ «հայերը գցող են»՝ «խաբող» են: Սա ևս գերընդհանրացման արդյունք է, երբ մենք որոշում ենք, որ կարելի է անհատի հատկությունը տարածել բոլորովին այլ ֆենոմենի վրա, ինչպիսին հանրությունն է, որն այլ օրինաչափություններով է գործում, թեև իհարկե, կազմված է անհատներից:

Հետազոտական դիտարկումներ ազգային ոլորտի մասին

Ռացիոնալ-իռացիոնալ

Որտե՞ղ, ինչպե՞ս ու ինչքանո՞վ է դրսևորվում հասարակության ռացիոնալությունն ու իռացիոնալությունը: Ռացիոնալ-իռացիոնալ առանցքի վրա հասարակության դիտարկումը կարևոր է, քանի որ այս չափումը առնչվում է և՛ անհատական մակարդակին, և՛ դրանով կարելի է բնութագրել հասարակական, խմբային վարք: Ի վերջո երբ մենք ուզում ենք մարդկանց վարքագիծը փոխել, որոշակի ասելիք հասցնել, ո՞րն է առավել արդյունավետ՝ գործ ունենալ ռացիոնա՞լ, թե՞ իռացիոնալ (հույզերի, նախազգացումների և այլն) դաշտի

հետ: Ըստ իս՝ իռացիոնալությունը Հայաստանում գերիշ-խում է: Մարդիկ շատ արագ արձագանքում են այն ազդակներին, որոնք իռացիոնալ են, և շատ դժվար են արձագանքում փաստարկներին և տրամաբանված տեքստերին: Դրանցից անգամ վախենում կամ խուսափում են: Սա տարբեր պատճառներ կարող է ունենալ, նաև կարող է լինել զուտ հոգնածության արդյունք: Այս դեպքում հուզական արձագանքը ավելի միանգամից, արագ է ստացվում, քան մտածողականը: Նաև պետք է փորձենք հասկանալ, թե ինչու՞ են մարդկանց ավելի հեշտ հուզում հենց այս և ոչ այլ տիպի հուզական ազդակները կամ փաստարկները: Նաև պետք է ընտրություն կատարել՝ արդյո՞ք նախընտրելի է ավելի շատ աշխատել հուզական դաշտի հետ (օրինակ՝ բարելավել հույզերը), թե՞ փորձել զարգացնել ռացիոնալությունը:

Ելնելով տարիների իմ հետազոտական դիտարկումից՝ կարող եմ նշել, որ Հայաստանում մարդիկ ավելի շատ պրակտիկ են, քան ռացիոնալ, ու որ պրակտիկությունը դեռ չի ենթադրում ռացիոնալություն: Մարդը կարող է իր շատ պրակտիկ (կամ այդպիսին ընկալվող) խնդիրը լուծել հուզական գործոնի ազդեցությամբ: Օրինակ՝ Հայաստանում մարդը կարող է շատ պրակտիկ ձևով վարկ վերցնել ու հարսանիք անել, որ կողքինն ինչ-որ բան չասի, որ «ամոթով չմնա». սա պրակտիկ լուծում է, բայց ռացիոնալ չէ:

- **Ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմ**

Ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմ բաժանումը արևմտյան մշակութային հոգեբանության մեջ կարևոր չափումներից մեկն է, թեև կարելի է այն քննադատել, և ինքս էլ վերապահումով եմ մոտենում, քանի որ շատ դժվար է մեր տիպի երկրները այս երկու կողմերից մեկում տեղավորել: Որպես այս բաժանման փոխզիջումային տարբերակ հաճախ նշվում է, թե մենք մեջտեղում ենք՝ «և՛ այն ենք, և՛ այս», բայց այսպիսի մոտեցումը շատ բան չի բացատրում: Ամեն դեպքում Հայաստանում մարդկանց վարքը ինդիվիդուալիստական չէ, քանի որ անհատը կարևորված չէ, անհատի ինքնավարությունն ու սուբյեկտությունը չեն խրախուսվում: Ինդիվիդուալիզմը կենթադրեր, որ այն պետք է դրսևորվի սկսած մարդու վաղ դաստիարակությունից մինչև հանրային - քաղաքական գոր-ծունեություն: Մյուս կողմից, ոչ էլ կոլեկտիվիստական ենք, որովհետև կոլեկտիվ շահերը ևս արժեզրկված են: Կարելի է ասել, որ մենք խմբային և դրանից էլ այն կողմ

գնալով՝ ընտանեկան մոդելի հասարակություն ենք, ուստի մենք լավ չենք տեղավորվում այս առանցքի վրա, կամ էլ ավելի խորը պատկերացումներ են պետք այն մասին, թե ի՞նչ ասել է անհատական, ի՞նչ ասել է կոլեկտիվ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ մեր երկրում կոլեկտիվ ինքնությունը շատ անհստակ է: Մտերիմների շրջանակից քիչ ավելի ընդարձակ «մենք»-ի կոլեկտիվ ինքնությունը դժվար ձևավորվող է Հայաստանում: Դժվար է մարդկանց տեսանելի դարձնել կոլեկտիվ կամ հանրային շահը, որովհետև մարդիկ դեռևս մնում են իրենց փոքր խմբային և անհատական ինքնությունների մակարդակում: Հետազոտություններիցս մեկում բաց-հայտված արդյունքներից էր մի շատ հետաքրքիր բան, որ *սփյուռքային* է *նույնիսկ այստեղ ապրող հայի ինքնությունը*, այսինքն՝ կարող ենք եզրակացնել, որ ազգային ինքնությունը ապատարածականացված է: Հարցվողներից ստացված խոսքային ու վիզուալ նյութը ցույց էր տալիս, որ Հայաստանի երիտասարդը, որը խոսում է Հայաստանի՝ որպես իր համար նշանակալի բանի մասին, նկատի չունի այս երկիրը, իր հողումը «Հայաստան» կոնստրուկտն է, որը հավասար չէ ներկայիս երկիր Հայաստանին: Ուրեմն իր դրական ինքնությունը կառուցելիս ու պահպանելիս նա հեռանում է երկրից՝ որպես պետություն, և կառուցում է պատկանելություն ոչ այսօրվա ու այս տեղի Հայաստանին: Իսկ երբ մարդն ինքն իրեն չի խարսխում, չի տեղավորում այստեղ և հիմա, եթե հոգեբանական մակարդակում նա այստեղ չէ, ինչպե՞ս կարող է շահագրգիռ լինել այդտեղ որևէ բան անելու:

- **Ավանդակա՞ն, թե՞ պահպանողական**

Մենք շատ հաճախ լսում ենք՝ հայերն ավանդապահ են կամ ավանդույթ հարգող են և այլն: Սակայն արժեքների և սոցիալական վարքի շուրջ մեր հետազոտության տվյալները (Խաչատրյան, Մանուսյան և այլք 2014[1]) ցույց են տալիս, որ մենք, իհարկե, շատ պահպանողական ենք, բայց ոչ հատկապես ավանդական: Բանն այն է, որ ըստ Շ. Շվարցի՝ արժեքների մշակութային հետազոտության մեթոդաբանության, պահպանողական արժեքների խմբին

[1] *Գրքի էլեկտրոնային տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://docs.google.com/file/d/0B6RwRQx-ACtaenU1VnRxTXJvQms/edit?pli=1*

են պատկանում *ավանդույթը*, *անվտանգությունը* և *կոնֆորմիզմը*: Հայաստանում արված հետազոտության տվյալներով պահպանողականությունը բավականին բարձր աստիճանակարգ է ստացել, բայց անվտանգության ու կոնֆորմիզմի հաշվին, մինչդեռ ավանդականության սանդղակը բավականին ցածր է: Այսինքն՝ հիմնական եզրակացությունն այն է, որ մարդկանց մոտ փոփոխվելու ցանկություն չկա, այլ կա անվտանգության մտահոգություն: Իհարկե, այս տարբերակումը մենք կարող ենք առօրյա դիտարկումներով էլ անել. հաճախ մարդիկ վախենում են «նոր»-ից, փոփոխությանը չեն մասնակցում, հարմարվում են ծանոթ եղածին, բայց որպես այդպիսին հենց ավանդույթներից չի, որ կառչած են: Կարող էինք լինել ավանդական, բայց մեր ավանդույթի մեջ ունենալ նաև փոխելու, նոր բաներ փորձելու ձգտում:

- **Ձև-բովանդակություն**
  Հանրային քննադատություններում հաճախ լսում եմ, որ մեր հասարակությունը *ձևի* հասարակություն է, ամեն ինչ արվում է ձևի համար, բովանդակություն չկա, հատկապես, երբ խոսքը փոփոխություններին տանող որոշումների, բարեփոխումների մասին է: Բայց եկեք դիտարկենք՝ սկսած հաշմանդամների համար հատկացված թեքություններից, վերջացրած գենդերային հավասարության քաղաքականություններով: Ինձ մոտ տպավորություն է, որ մենք ձևի հասարակություն էլ չենք, ավելի շատ անունի հասարակություն ենք, ավելի շատ աշխատում են անուններն ու անվանումները, իսկ դա անգամ ձևի էլ չի հասնում: Այսինքն՝ եթե կարևոր լիներ ձևը, ապա գոնե ճիշտ, կիրառելի *ձևով* կսարքեին այդ թեքահարթակները, սակայն դրանք արվում են, որպեսզի, ասենք, քաղաքապետարանի այսինչ մատյանում գրվի՝ թեքահարթակները ապահովվել են: Դրա համար այդ թեքահարթակներից հազիվ թե սայլակով մարդիկ կարողանան օգտվել: Ըստ իս՝ ձևը կարևոր բան է, ու եթե նույնիսկ ձևի համար արվեն քայլեր, հետո ինչ-որ մեկը դա կլցնի բովանդակությամբ, սկզբում կօգտագործեն, հետո կհասկանան, թե ինչու է այդպես լավ: Բայց դեռևս ձևի փուլում մենք ունենում ենք խնդիրներ:

- **Համայնք-հասարակություն**
  Հասարակությունների ուսումնասիրություններում կա նաև այսպիսի տարբերակում՝ գեմայնշաֆթ (Gemeinschaft) և գեզելշաֆթ (Gesellschaft), այսինքն՝

1 | համայնքային արժեքների և վարքաձևերի վրա հիմնված միավոր՝ համայնք,

2 | և քաղաքացիական պայմանավորվածությունների և օրենքի գերակայության վրա հիմնված միավոր՝ հասարակություն:

Կան սրան համանման այլ տարբերակումներ, օրինակ՝ էթնիկ-ազգային ինքնություն և քաղաքացիական-ազգային ինքնություն, կամ պարզապես էթնիկ-քաղաքացիական բաժանումը: Իհարկե, դիխոտոմիկ մոտեցումները քննադատելի են, որովհետև ցանկացած երկրում երկու էլեմենտներն էլ առկա են, բայց առնվազն բաղադրիչներից մեկնումեկն ավելի գերակա է: Իմաստից զուրկ չէ մեր դեպքում խոսել այս բևեռներից հավաքականության համայնքային, էթնիկ-ազգային տիպի մասին: Անգամ քանակական սոցիալ-հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում քաղաքացիական վարքաձևին տանող, դա վիճակագրորեն կանխատեսող արժեքները ցածր մակարդակի վրա են, և ավելի ցցուն են համայնքայինին մոտ վարքաձևերը: Այս, ինչպես նաև մեր քննարկած մյուս հարցերը ստիպում են մեզ կանգ առնել ու մտածել, թե ինչպես խոսել հասարակության ներկայացուցչի հետ քաղաքացիական հարցերի մասին՝ նրան հասկանալի լինելով:

- **«Հասարակ» հասարակություն-քաղաքացիական հասարակություն**
  Քաղաքացիական հասարակություն եզրը արդեն վիճարկված է ակադեմիական շրջանակում, քանի որ մշտապես ճշգրտման կարիք ունի: Կարևոր է շեշտել, թե արդյո՞ք քաղաքացիական հասարակություն ասելով նկատի ունենք դրա լայն իմաստը, այն է՝ հասարակություն, որն իր արժեքաբանությամբ, մարդկանց միջև գրված ու չգրված պայմանավորվածություններով քաղաքացիական է, թե՞ նկատի ունենք քաղաքացիական հասարակության նեղ իմաստը, այսինքն՝ այն շրջանակները, մարդիկ, խմբերը, որոնք «քաղաքացիական» են՝ ի տարբերություն «հասարակ» հասարակության: Մեր հասարակության առնչությամբ ես կանեի հետևյալ դիտարկումը, որ այն կազմված է տարբեր ինքնություններ դավանող, տարբեր ինքնասահմանումներ ունեցող խմբերից, բայց մենք պետք է միշտ հիշենք, որ այդ ինքնասահմանումները ևս փոփոխվող են: Միևնույն մարդը, որ իրեն ինչ-որ համատեքստում համարում է այսպիսին, մեկ այլ համատեքստում հասկանում է, որ նա նաև մասն է մեկ ուրիշ խմբի, նա լրիվ չի կարող հրաժարվել կամ անտեսել այն մյուս ինքնությունը կամ մեկ այլ խմբի հետ իր մերձությունը: Որպես օրինակ կբերեմ մի կնոջ ֆեյսբուքյան գրառում. *«Երբ տանը հայելու մեջ տեսա, որ իմ դեմքը իրենցից շատ չի տարբերվում, ահավոր վախեցա»:*

Նա անդրադառնում է Փակ շուկայի վերացման և դրա տեղում Երևան Սիթի կառուցելու դեմ ցուցարարների վրա գրոհողներին ու հայհոյողներին: Այս գրառումը խոսուն է այն իմաստով, որ մի կողմից առկա է նմանության շուրջ անդրադարձն ու դրա գիտակցումը՝ այն, որ այնուամենայնիվ, սահմանները պայմանական են, որ քո հասարակության մեջ առկա ցանկացած ֆենոմեն կարող ես քո մեջ հայտնաբերել ինչ-որ մասով (որպես տագնապ, կամ որպես հատկություն): Մյուս կողմից դու, միևնույն է, փորձում ես սահմանը դնել և մնալ քո ինքնության շրջանակներում: Այստեղ լավ երևում են հասարակության մեջ առկա սահմանները, որոնք մի կողմից ձևակերպում են քեզ, մյուս կողմից դրդում, որ դրանք փոփոխես:

■ **Հոգեբանության ասելիքը**

Որևէ հանրային երևույթ, խնդիր տեսնելիս հոգեբանների հիմնական արձագանքն, իհարկե, այդ երևույթի տակ անհատական, չգիտակցված տարրեր տեսնելն է: Կան, սակայն, հոգեբանության բնագավառներ, որոնք հենց հասարակական երևույթներ են ուսումնասիրում: Այս առումով բանավեճ կա հոգեբանական երկու հիմնական թևերի միջև: Ըստ *մշակութային հոգեբանության*՝ տարբեր մշակույթներում ապրող մարդիկ իրարից տարբերվում են մտածողությամբ, հույզերով, վարքաձևերով: Մշակույթը ձևավորում է անհատին և դա պետք է հաշվի առնել՝ սկսած թերապևտիկ պրակտիկայից, վերջացրած օպտիմալ քաղաքականություններով: Չուտ արտաքին բաղադրիչների փոփոխմամբ, գլոբալացման տարրերի ներմուծմամբ մշակույթները չեն փոխվում: Մշակույթի ավելի խոր շերտեր շարունակում են ազդել անհատի վարքի վրա, և դա հոգեբանական երևույթ է: Ուրեմն հոգեբանության իրավասության մեջ է հասկանալը, թե մշակույթը ինչ ազդեցություն ունի անհատի վրա: Եվ ցանկացած անհատական կամ միկրոխմբային վարքագիծ ուսումնասիրելիս միշտ պետք է մշակութային չափումը հաշվի առնել: Հոգեբանության ավելի *դասական թևը*, մասնավորապես՝ անձի ու զարգացման հոգեբանները, գտնում են, որ հոգեկան գործընթացների մշակութային տարբերությունները չափազանցված են, և որ իրականում ներմշակութային տարբերությունն ավելի մեծ է, քան միջմշակութայինը: Սա բազմաթիվ հետազոտություններով ապացուցված է, այսինքն՝ զուտ հոգեկան հատկանիշների իմաստով կամայական տասը հայ իրար մեջ ավելի են տարբերվում (օրինակ՝ ինտելեկտով կամ նպատակասլացությամբ), քան միասին

վերցված՝ կամայական տասը իռլանդացուց: Եթե մենք համեմատենք կամայական երկու երկիր ոչ թե իրար մեջ, այլ ամեն մեկն իր ներսում, ապա կտեսնենք, որ խառնվածքի, ինտելեկտի ու բազմաթիվ այլ հատկանիշների իմաստով ներմշակութային զանազանությունն ավելի մեծ է:

Սա վիճակագրական իրականություն է, բայց ըստ իս՝ չի հակասում նրան, որ մշակույթը նշանակություն ունի: Երբ մենք ուզում ենք հասկանալ ոչ թե զուտ թեստային ցուցանիշները, այլ արդեն բովանդակային տարբերությունները, օրինակ՝ ի՞նչ նպատակների վրա է ուղղում նպատակասլաց անձն իր ակտիվությունը այս երկրում՝ ի տարբերություն այլ երկրում ապրող մեկ այլ նպատակասլաց անձի, ինչպե՞ս է դրսևորում իր այդ նպատակասլացության հատկանիշը (օրինակ՝ ուղղակիորեն, թե անուղղակիորեն, քողարկված), ինչպե՞ս է նրա այդ գիծը ընկալվում և գնահատվում, ինչպե՞ս է փորձում անձն իր վարքը կազմակերպել այս կամ այն իրականության մեջ, մենք արդեն գալիս ենք դեպի մշակութային հոգեբանություն: Սոցիալ-մշակութային հոգեբանությունը ելնում է նրանից, որ անհատն ու հասարակությունը անբաժան են և փոխադարձ կառուցող: Մշակույթում դոմինանտ արժեքանորմատիվ համակարգը հիմք է պրակտիկաների և ինստիտուտների ձևավորման համար, որոնք էլ հետադարձ ամրապնդում են մշակույթը: Այս հետադարձ ամրապնդումն էլ է շատ կարևոր: Որքան էլ ասեն՝ մենք մեծահասակներին հարգող ազգ ենք, եթե պետության մեջ ծերունին սոցիալ-տնտեսապես և առողջապահական առումով պաշտպանված չէ, այլ կերպ ասած՝ պետականորեն հարգված չէ, վաղ թե ուշ չի հարգվելու նաև հասարակության մեջ: Բայց ինստիտուտի աշխատել-չաշխատելն էլ կախված է մշակույթի «ընդունելիությունից»: Եթե օրինակ, հասարակության անդամները ավելի շատ ներքնայնացրել են ընտանիքի ու բարեկամական կապերի արժեքը, հայրիշխանական արժեքները, քան թե հավասարության արժեքը, այդ երկրում շատ դժվար կլինի ներմուծել այնպիսի ինստիտուտ, որը հիմնվում է հավասարության սկզբունքների վրա, ու սրա արդյունքները մենք կարող ենք պատկերացնել մեր կյանքի բազմաթիվ օրինակներով: Երբ մենք ձգտում ենք սոցիալ-մշակութային փոփոխության, շատ առումով դա ենթադրում է արժեքային փոփոխություն: Տարբեր հոգեբանական և մշակութային հետազոտություններում երևում է, որ եթե ցանկանում ես փոփոխել հասարակությունը, իր նորմատիվ դաշտը պետք է փոխես, իսկ դա ամենակարծր, դժվար փոփոխվող ոլորտներից մեկն է: Արժեքների մշակութային տեսությունն

ասում է, որ կա համամարդկային արժեքների որոշակի ցանկ, և մշակութային տարբերությունները այս կամ այն արժեքների առաջնահերթության, աստիճանակարգման մեջ են: Արժեքները շարժառիթային հիմք ունեն ու պետք է լուծեն մարդկանց համար կոնկրետ խնդիրներ, օրինակ՝ սոցիումի և անհատի միջև հարաբերության խնդիրը: Այն կարող է լուծվել հօգուտ ինդիվիդուալիստական կամ կոլեկտիվիստական արժեքների: Անհատի և շրջակա միջավայրի միջև խնդիրն էլ, օրինակ, լուծվում է բնության հետ ներդաշնակության կամ բնությունը տիրապետելու արժեքներով: Հայաստանում (Երևանում և 4 մարզերում) արված հետազոտության տվյալներով պարզվել է, որ հարմարվողականությունը (կոնֆորմիզմը) և անվտանգությունը գերակա արժեքներ են: Դրանք, կարծես թե, բացասական կանխատեսողներ են քաղաքացիական վարքի համար: Կոնֆորմությունը գերակա արժեք է ամբողջ ընտրանքի մակարդակով, եթե վերցնում ենք բոլոր տարիքային խմբերի ու մարզերի միջինները, իսկ առանձին վերցրած երիտասարդների խմբում նաև ձեռքբերման արժեքն է արտահայտված եղել, նույնիսկ ավելի, քան անվտանգության արժեքը (Խաչատրյան, Մանուսյան և այլք 2014): Այս պատկերը նշանակում է, որ մարդիկ, որոնք անվտանգության ու կոնֆորմիզմի մտահոգության դաշտում են, շատ դժվար կընկալեն այն հաղորդագրությունները, խոսակցությունները, որոնք փոփոխության հետ են կապված, որովհետև փոփոխությունը սկսվում է զուգակցվել վտանգի կամ ձևին չհամապատասխանելու հետ: Որպես դրական միտում՝ երիտասարդների շրջանում կարելի է նշել ձեռքբերումը: Այսինքն՝ եթե մենք ուզում ենք ձևավորել քաղաքացիական վարքին ուղղված հաղորդագրություններ, թերևս ձեռք-բերումների լեզվով կարելի է խոսել. դա պետք է ինչ-որ ձեռքբերում լինի երիտասարդի համար, ոչ թե ուղղակի լավ լինի կողքինի համար:

Բացի այդ, եթե մեզ մոտ պատկանելությունն ու հիերարխիան շատ բարձր են, և էմպիրիկ հաստատված փոխկապվածություն կա պատկանելության ու հիերար-խիայի արժեքների ու կոռուպցիայի միջև, ապա մենք ինչպե՞ս պայքարենք կոռուպցիայի դեմ: Մենք կարող ենք քաղաքականություններ ընդունել, որոնք կարծես թե դավանում են հավասարություն, անաչառություն ու ապակլանայնություն, բայց եթե մենք այդ պրակտիկան բերեցինք դրեցինք մի տեղ, որտեղ մարդիկ այլ կերպ են մտածում, արդյո՞ք դա կաշխատի և ինչպե՞ս, կսկսվի այն

շրջանցվե՞լ, թե՞ ոչ:

Ամեն դեպքում, եթե մենք ուզում ենք որոշակի հանրային վարքի փոփոխություն, ապա պետք է փորձենք ավելի երկար մտածել, թե ինչպես տարբեր սոցիալական հիմքեր ունեցող մարդկանց բերել մի դաշտ, ինչ կարող է միավորել մարդկանց, որոնք տարբեր սոցիալականացում են անցել, որոնք տարբեր մշակույթների կրող են: Այստեղ գալիս ենք ինքնության հարցերին, թե ինչպես տարբեր խմբերի միջև ձևավորել «մենք»-ի զգացում կոնկրետ հարցերի շուրջ:

Գրականություն

1 | Խաչատրյան, Ն., Մանուսյան, Ս. և այլք (2014) *Մշակույթ, արժեքներ, համոզմունքներ. վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում:* Երևան. հեղ. հրատ.:

2 | Abrams, D., Hogg, M. A. (2006) *Social Identifications: A Social Psychology of Intergroup Relations and Group Processes.* Routledge.

3 | Alesina, A., Giuliano, P. (2009) Family Ties and Political Attitudes. *IZA Discussion Papers,* 4150.

4 | Brubaker, R., Cooper, F. (2000) Beyond “Identity”. *Theory and Society, 29*(1): 1-47.

5 | Duncan, L. E. (2012) The Psychology of Collective Action. In K. Deaux & M. Snyder (eds.), *The Oxford Handbook of Personality and Social Psychology.* New York, NY: Oxford University Press.

6 | Duszak, A. (ed.) (2002) *Us and Others: Social Identities across Languages, Discourses and Cultures* (Vol. 98). John Benjamins Publishing.

7 | Krosnick, J. A., Visser, P. S. & Harder, J. (2010) The Psychological Underpinnings of Political Behavior. *Handbook of Social Psychology, 5*(2).

8 | Lamont, M., Molnar, V. (2002) The Study of Boundaries in the Social Sciences. *Annual Review of Sociology, 28:* 167-195.

9 | Markova, I. (2000) The Individual and Society in Psychological Theory. *Theory and psychology, 10*(1): 107-116.

10 | Shulman, S. (2002) Challenging the Civic/Ethnic and West/East Dichotomies in the Study of Nationalism. *Comparative Political Studies, 35*(5): 554-585.

11 | Шварц, Ш. (2008) Культурные ценностные ориентации: природа и следствия национальных различий. *Психология. Журнал высшей школы экономики, 5*(2): 37-67.

Արմինե Իշխանյան

Արմինե Իշխանյանը (Armina Ishkanian) Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքագիտության դպրոցի պրոֆեսոր է, մագիստրոսական ծրագրեր է ղեկավարում Սոցիալական քաղաքականությունների և զարգացման բաժնում (պետություն և ՀԿ հոսանքներ): Նրա փորձառության շրջանակները ներառում են քաղաքացիական հասարակությունը, ժողովրդավարությունը, սոցիալական պայքարի ձևերը, գենդերային հարցերը և նախկին Խորհրդային Միության և Արևելյան Եվրոպայի հետսոցիալիստական երկրների զարգացումը:

Ա. Իշխանյանի հոդվածի առիթը 2015 թ. Երևանում էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման դեմ բողոքի գործողություններն են, բայց այն հեղինակի՝ առավել ծավալուն և ակադեմիական հոդվածի[1] սեղմ տարբերակն է, որում նա անդրադառնում է վերջին տարիներին Հայաստանի քաղաքացիական ակտիվիզմի (թերևս, ամենից նշանակալի) ալիքին: Այն դիտարկում է հայաստանյան ակտիվիստական նախաձեռնությունները ինչպես տեղական առանձնահատկությունների, այնպես էլ համաշխարհային արդի շարժումների համատեքստում՝ դրանցում տեսնելով ժամանակակից կապիտալիստական աշխարհի հիմնախնդիրների տեղական արձագանքների առաջին քայլերը:

[1] Ishkanian, A. (2015) *Self-Determined Citizens? New Forms of Civic Activism and Citizenship in Armenia. In Europe-Asia Studies,* 67(8). 1203-1227. DOI:10.1080/09668136.2015.1074981

Ինքնորոշվա՞ծ քաղաքացիներ. քաղաքացիական ակտիվիզմի նոր ալիքը Հայաստանում

Սկսած 2010-ից՝ քաղաքացիական նախաձեռնությունների կազմակերպած բողոքի ցույցերը հաճախադեպ դարձան Հայաստանի մայրաքաղաք Երևանում և առավել նվազ հաճախականությամբ՝ Երևանից ավելի փոքր քաղաքներ Գյումրիում և Վանաձորում[2] : Հայաստանում քաղաքացիական նախաձեռնությունները հասցեագրում են մի շարք խնդիրներ, ինչպես օրինակ՝ շրջակա միջավայրը, մշակութային արժեքների պահպանությունը, սպառողների իրավունքները, աշխատանքի և զբաղվածության խնդիրները, նաև մարդու իրավունքները: Այդուհանդերձ, դրանք գրանցված, հաստիքային (professionalized) ՀԿ-ներից տարբերվում են մի քանի հիմնական բնութագրերով՝ հասցեագրվող խնդիրների բնույթով, կազմակերպական կառուցվածքներով, գործողությունների զինանոցով և օտարերկրյա դոնորների բացակայությամբ:

«Open Movements»-ում[3] Քերսթին Զաքոբսոնի[4], Իոնել Սավանի[5] և ուրիշների կողմից վերջերս քննարկված շարժումների համանմանությամբ քաղաքացիական այս նախաձեռնությունները կազմավորում են հետխորհրդային շրջանի քաղաքացիական ակտիվիզմի մի նոր ալիք Հայաստանում:

Երբ ուսումնասիրում ենք քաղաքացիական նախաձեռնությունների ծաղկումը, ի՞նչ է մեզ ասում նրանց ի հայտ գալը հետխորհրդային շրջանում քաղաքացիական հասարակության զարգացման և քաղաքացիական ակտիվիզմի ու քաղաքացիության մասին փոփոխվող ընկալումների ու պրակտիկաների մասին: Բավականին շատ բան:

[2] *Հոդվածի թարգմանությունն իրականացրել է Էվելինա Գյուլխանդանյանը՝ ըստ բնագրի (տե՛ս Ishkanian A. (2015, June 16) «Self-determined citizens? A new wave of civic activism in Armenia», Open Democracy / ISA RC-47: Open Movements, 2016.09.21 դրությամբ հասանելի է այստեղ՝ https://opendemocracy.net/armine-ishkanian/selfdetermined-citizens-new-wave-of-civic-activism-in-armenia): Թարգմանության իրավունքը սիրով տրամադրել է հեղինակը՝ Արմինե Իշխանյանը Open-Democracy գլոբալ մեդիա հարթակի համաձայնությամբ (ծնթ. խմբ.):*

[3] *Հեղինակը նկատի ունի Open Democracy գլոբալ մեդիա հարթակի հատուկ բաժինը նվիրված սոցիալական պայքարի թեմային: Տե՛ս https://www.opendemocracy.net/openmovements (ծնթ. խմբ.):*

[4] *Jacobsson K. (2015, May 19) «Urban grassroots mobilization in central-east European cities», Open Democracy / ISA RC-47: Open Movements. 2016.09.21 դրությամբ հասանելի է այստեղ՝ https://opendemocracy.net/kerstin-jacobsson/urban-grassroots-mobilization-in-centraleast-european-cities*

[5] *Sava I. N. (2015, May 11) «A second generation of grassroots movements in central and eastern Europe?», Open Democracy / ISA RC-47: Open Movements. 2016.09.21 դրությամբ հասանելի է այստեղ՝ https://opendemocracy.net/ionel-n-sava/second-generation-of-grassroots-movements-in-central-and-eastern-europe*

Չնայած Հայաստանում քաղաքացիական նախաձեռնությունները հասցեագրում են շատ մասնավոր և որոշ դեպքերում նեղ խնդիրներ (օր.՝ ջրվեժի, հանրային այգու փրկություն և այլն), նրանց ի հայտ գալը պայմանավորված է կոռուպցիայով, օրենքի բացակայությամբ, օլիգարխիկ կապիտալիզմի աճով, ֆորմալ քաղաքական վերնախավի կողմից Հայաստանի շարքային քաղաքացիների անհանգստությունների հասցեագրումը ձախողելու շուրջ ավելի լայն մտահոգություններով. հենց այս խնդիրներն էլ բարձրաձայնվում են նրանց կողմից:

Չնայած հաստիքային ՀԿ-ների հետ «ետնաբեմում» ունեցած հատվածական կապերին, որը Մարլիս Գլասիուսը[6] և ես ուսումնասիրել ենք Հայաստանում և այլուր, և որը մենք անվանում ենք «քողարկված սիմբիոզ»՝ քաղաքացիական նախաձեռնություններում ներառված ակտիվիստները քաղաքացիական հասարակության մասին ունեն առավել քաղաքական ընկալում՝ համեմատած արևմտյան դոնորների՝ 1990-ականներին շրջանառության մեջ մտցրած ընկալման. նրանք նաև հաճախ իրենց զատում են ՀԿ-ներից:

Հայաստանում ավանդականորեն ՀԿ ջատագովությունը (advocacy) կառուցվածքայնացված է, ոչ առճակատային, տեխնոպաշտական և փորձագիտական (expert-based): Քաղաքացիական նախաձեռնությունները կիրառում են գործողությունների այլ զինանոց՝ փողոցային ցույցեր, գրավումներ (occupations), ինչպես նաև ուղղակի գործողության ստեղծագործ միջոցներ, ինչպես օրինակ՝ ֆլեշմոբեր, համերգներ, թատերական ներկայացումներ, արվեստ և լուսանկարչական ցուցահանդեսներ: Ավելին, քաղաքացիական նախաձեռնությունների դեպքում որոշումների կայացումը հիմնված է համաձայնության սկզբունքի վրա, և արժևորվում ու խրախուսվում է հորիզոնականությունը:

Այդ պատճառով էլ, քաղաքացիական նախաձեռնությունները ոչ միայն չեն ընդունում քաղաքացիական հասարակության «ՀԿ-ականացումը», այլև ներմուծում են քաղաքացիական ակտիվիզմի նոր ընկալումներ ու պրակտիկաներ: Քաղաքացիական նախաձեռնություններում ընդգրկված քաղաքացիներն իրենց ակտիվիզմը նկարագրում են որպես «ինքնորոշված» քաղաքացիություն և մեծ կարևորություն են տալիս անկախությանը, համերաշխությանը և ինքնակազմակերպմանը:

[6] *Տե՛ս https://www.academia.edu/9573889/Surreptitious_symbiosis_engagement_between_activists_and_NGOs*

Նրանք վերահիմաստավորում են քաղաքացիությունը, որի դեպքում քաղաքացիներն ունեն իրավունքներ և պարտականություններ իրենց համայնքների, իրենց երկրի հանդեպ, ինչպես նաև խրախուսում են մարդկանց դառնալ «տերը» իրենց երկրի և հասարակության մեջ լինել գործուն սուբյեկտներ՝ ի տարբերություն անգործ և լուռ հանդիսատեսի, որ բողոքում է մասնավոր զրույցներում, բայց չի ձեռնարկում որևէ հանրային գործողություն՝ փոխելու իրերի դրությունը: Բայց ինչո՞ւ այս խմբերն առաջացան և ի՞նչ լծակներ ունեն նրանք՝ ազդելու ավելի լայն քաղաքական գործընթացների վրա:

Ինչո՞ւ են քաղաքացիական նախաձեռնություններ առաջանում հիմա

Շատերը, ում հետ ես հարցազրույց եմ վարել Հայաստանում, քաղաքացիական նախաձեռնությունների առաջացումը և ծաղկումը բացատրում են հանրային գիտակցության «զարթոնքով» և փաստում, որ սա նոր սերնդի ծնունդի արդյունք է, երբ բացակայում է խորհրդային ռեժիմում ապրելու անմիջական փորձը, և որտեղ հասանելի են նոր տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաները: Անշուշտ, ակտիվիստների մեծամասնությունը 20-30 տարեկաններն են, որոնք էլ հենց ունեն նոր սերնդին հատուկ այդ կողմը:

Չնայած նրան, որ սոցիալական մեդիայի ներմուծումը և տարածումը (ներառյալ Ֆեյսբուքն ու Յութուբը, նաև ուղիղ հեռարձակման տեխնոլոգիաները) քաղաքացիական ակտիվիստների համար առավել մատչելի դարձրին տեղեկատվությունը, և առավել արդյունավետ ու արագ կազմակերպումն ու համախմբումը, մենք պետք է զգուշանանք սոցիալական մեդիայի չափազանցվող ազդեցությունից, հատկապես կառավարության կողմից այն որպես հսկողության, անգամ որպես սադրանքի (տե՛ս Մարոզովի «Ցանցային Մոլորություն»-ը[7]) գործիք օգտագործելու փաստերի առկայության պարագայում: Բացի դրանից՝ սոցիալական մեդիան կարող է բացատրել, թե ինչպես են ակտիվիստները կազմակերպվում, բայց այն չի բացատրում, թե ինչու են նրանք դուրս գալիս փողոց: Ավելին, մենք Հայաստանում ակտիվիզմի առաջացումը պետք է վերլուծենք համաշխարհային բողոքի արդի շարժումների ավելի լայն համատեքստում:

[7] *Marozov, E. (2012) The Net Delusion: How Not to Liberate the World. Penguin.*

Չնայած Հայաստանի՝ քաղաքականապես մեկուսացված լինելուն, և հայաստանյան քաղաքացիական հասարակության և համաշխարհային առավել լայն շարժումների միջև սակավադեպ կապերին՝ ակտիվիստների համար մատչելի է համաշխարհային զարգացումների մասին տեղեկատվությունը, և այն արտացոլվում է նրանց կարգախոսներում, պրակտիկաներում և դիսկուրսում: Օրինակ՝ «Մաշտոցի պուրակ» քաղաքացիական նախաձեռնությունը, որը 2012-ին փրկեց պուրակը շքեղության կրպակների կառուցման նպատակով քանդվելուց, ինքնագիտակցաբար բնութագրեց իրեն որպես համաշխարհային «Գրավում» (Occupy) շարժումների մաս՝ լայնորեն օգտագործելով «Գրավում»-ների գործողությունների զինանոցը: Այնուամենայնիվ, ակտիվիստները միտված էին մատնանշելու, որ համեմատած մյուս երկրների՝ հայաստանյան իրադրությունը մեծապես տարբեր է: Ակտիվիստներից մեկն ասաց. «Հայաստանում նորազատականությունն իրեն դրսևորում է ավանդաբար ընդունված մոտեցումից մի փոքր այլ կերպ: Մասնավոր շահը նաև քո օլիգարխիկ շահն է, որը փոխակերպվում է քաղաքական իշխանության, որն էլ՝ պետական իշխանության»:

Այսպիսով, ընդունելով, որ նորազատական հանրային քաղաքականություններն ունեն համաշխարհային տարածում, մենք չպետք է մոռանանք, որ տեղական պատմություններն ու առկա սոցիալական և քաղաքական իրականությունները ձևավորում են դիմադրություն հանրային այս քաղաքականությունների դեմ: Հայաստանում, ինչպես նաև անշուշտ հետսոցիալիստական ողջ տարածաշրջանում սոցիալիստական ժառանգությունը և հետսոցիալիստական անցումային քաղաքականությունը ևս ազդում են մարդկանց կազմակերպման և համախմբման ձևերի վրա:

Համաշխարհային բողոքի ցույցերը ազդել են Հայաստանում քաղաքացիական ակտիվիզմի նոր ալիքի վրա, սակայն դա, ամենից առաջ, պայմանավորված է բարկությամբ, որ առաջ է եկել տեղական քաղաքական կուսակցությունների և ՀԿ-ների կողմից գործողությունների պակասից: Ակտիվիստները բարկությամբ են խոսում օլիգարխների աճող անպատժելիության և օրենքի բացակայության մասին՝ ավելացնելով, որ անհատ քաղաքացիներն ունեն բողոքելու իրավունք և պարտականություն, և որ մարդիկ չպետք է սպասեն, որ «մյուսները» գործեն իրենց փոխարեն: Անշու՛շտ, անհատական պատասխանատվությունը նորազատական ռացիոնալության էական հատկանիշն է. այն կարևորում է սուբյեկտների անձնական պատասխանատվությունը (self-

responsibility): Ինչևէ, Հայաստանում, քաղաքացիական նախաձեռնությունների համատեքստում, անձնական պատասխանատվությունը միտված չէ համախմբելու մարդկանց իրենց տնտեսական անձնային շահերը առավելագույնի հասցնելու համար, և այն ավելի շուտ միավորում է անհատների, որոնք գործի են դնում պատասխանատվությունը՝ հանուն ավելի մեծ, ընդհանուր բարիքի՝ գործելով ի նշան մյուսների հետ համերաշխության: Ակտիվիստները հաճախ մարդկանց ասում են. «Դո՛ւ ես քաղաքացին, դո՛ւ ձայն ունես, օգտագործի՛ր այն»:

Այդուհանդերձ, քաղաքացիության և պատասխանատվության նման ընկալումն ակտիվիստների շրջանակներից դուրս լայն տարածում չունի: Ինչպես բացատրեց մի շարք բնապահպանական նախաձեռնություններում ներգրավված մի հայտնի երիտասարդ կին ակտիվիստ Երևանից.

> *«Մարդիկ ամեն անգամ դիմում են ինձ ու ասում՝ ծառ են կտրում կամ քանդում են, կամ այս կամ այն: Ես նրանց ասում եմ. «Շնորհակալություն տեղյակ պահելու համար, բայց պետք չէ միայն ինձ դիմել: Դուք էլ կարող եք լուծել այդ խնդիրը: Անշուշտ ես կօգնեմ ձեզ, բայց դա ձեր այգին է, ձեր համայնքն է, ձեր պուրակն է, և դուք նաև ձեզ համար պետք է գործեք»:*

Առավել ընդգրկուն մասնակցության և ակտիվիզմի պակասը «վախի մթնոլորտի» գերակայությունն է, երբ մարդիկ վախենում են կորցնել իրենց աշխատանքը և ապրուստը: Պատճառներից մեկ ուրիշն էլ քաղաքացիական հասարակության՝ որպես փոփոխություն բերողի հանդեպ վստահության և հավատի բացակայությունն է:

Մաշտոցի պուրակի գրավման մեջ ներգրավված «Մենք ենք տերը մեր քաղաքի» քաղաքացիական նախաձեռնության ակտիվիստների կողմից տպագրված թռուցիկը պարունակում էր հետևյալ հաղորդագրությունը. «Մենք անհատ քաղաքացիներ ենք… մեր քաղաքացիական նախաձեռնությունը ՀԿ չէ և չի ստանում որևէ ֆինանսական աջակցություն»: Այս զատումը ռազմավարական նշանակություն է հաղորդում լայնորեն ընդունված և կառավարության կողմից ակտիվորեն սատարվող այն ընկալմանը, թե ՀԿ-ները բացառապես օտար (այսինքն՝ արևմտյան) օրակարգեր առաջ տանող «գրանտակերներ» են, ինչպես ես դա քննարկել եմ իմ «Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia»[8] գրքում:

[8] *Ishkanian, A. (2008) Democracy Building and Civil Society in Post-Soviet Armenia. Routledge.*

Կարո՞ղ են նրանք ազդել ավելի լայն քաղաքական գործընթացների և հանրային քաղաքականության վրա

Քաղաքացիական նախաձեռնությունները վերջին տարիներին ունեցել են փոքր, բայց նշանակալիորեն կարևոր հաղթանակներ, այդ թվում՝ ջրվեժի պահպանությունը («Փրկենք Թռչկանի ջրվեժը», 2011), հանրային պուրակը քանդելու գործընթացի կասեցումը («Մաշտոցի պուրակ», 2012), տրանսպորտի գնաճի կանխումը («100 դրամ» քաղաքացիական նախաձեռնություն, օգոստոս 2013) և կառավարության՝ կենսաթոշակների մասնավորեցման ծրագրերի հետաձգումը («Դեմ եմ» քաղաքացիական նախաձեռնություն, 2014): Բոլորովին էլ վերջերս՝ 2015-ի մայիսին, «Ոչ թալանին» քաղաքացիական նախաձեռնության կողմից կազմակերպվել էին մեծաթիվ բողոքի ցույցեր ընդդեմ էլեկտրաէներգիայի նախատեսվող գնաճի:

Մինչ ենթադրվում էր, որ Հայաստանի հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ղեկավարվելով նախագծով, հունիսի կեսերին պետք է հաստատեր էլեկտրաէներգիայի գնաճը, բողոքի ցույցերի արդյունքում Էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարը հայտարարեց, որ կարգավորող հանձնաժողովը կհաստատի ավելի մեղմ գնաճ՝ նախապես ծրագրվածի համեմատությամբ: Թեև այս ամբողջական կամ մասնակի հաղթանակները ոգեշնչեցին մասնակիցներին և հանրային ավելի մեծ ուշադրություն գրավեցին, քաղաքացիական նախաձեռնություններն այդպես էլ չկարողացան նշանակալիորեն ընդլայնել մասնակցությունը մայրաքաղաքից դուրս, և որ ավելի կարևոր է, բերել կառուցվածքային փոփոխություններ կամ ազդել քաղաքականապես զգայուն խնդիրների վրա, ինչպես բռնությունը Հայաստանի բանակում կամ հանքարդյունաբերությունը:

Ակտիվիստներն ընդունում են, որ եթե նրանք ուզում են հասնել առավել կառուցվածքային կամ քաղաքական մակարդակի փոփոխությունների, պետք է ընդլայնեն մասնակցությունը, պայքարեն վախի և անտարբերության դեմ և իրենց համակիրների շրջանում խրախուսեն գործորդության առավել մեծ զգացումը (sense of agency)[9]: Բայց դեռ կտեսնենք, թե ինչպես կզարգանան քաղաքացիական նախաձեռնությունները և ինչ ձևեր կունենան ապագայում բողոքն ու ակտիվիզմը:

[9] *Գործորդության զգացումը վերաբերում է անձի սուբյեկտիվ գիտակցությանը, առ այն, որ աշխարհում իր կամային գործողությունների նախաձեռնողը, իրականացնողն ու կառավարողը հենց ինքն է, այլ կերպ ասած՝ ինքն է տերը իր որոշումների (ծանոթ. թարգմ.):*

Կկարողանա՞ն արդյոք, Երևանի ակտիվիստները կապեր հաստատել մայրաքաղաքից դուրս այլ համայնքների և անհատների հետ՝ մասնակցությունը ընդլայնելու նպատակով: Կմնա՞ն նրանք ինքնավար, ազատ կազմակերպված, ոչֆորմալ խմբեր, թե չնայած իրենց տարբերվող ու առավել ծայրահեղ տեսակին՝ կսկսեն «ընդարձակել» իրենց ջանքերը՝ ինստիտուցիոնալացման կամ ՀԿ դառնալու ուղղությամբ, կամ էլ թե քաղաքական կուսակցությունների հետ կկազմեն դաշինքներ:

Այս տարբերակներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, իսկ մեզ մնում է տեսնել, թե ապագայում ինչպե՞ս կզարգանան քաղաքացիական նախաձեռնությունները, արդյո՞ք նրանք կկարողանան փոխել քաղաքականությունը Հայաստանում և ինչպե՞ս:

ՈՒՐԻՇԻ ՓՈՐՁԸ

Իգոր Բլաժևիչ

Իգոր Բլաժևիչը (Igor Blaževič) բոսնիական ծագումով իրավապաշտպան է, որ բազմաթիվ մարդասիրական և այլ առաքելություններ է իրականացրել աշխարհի այնպիսի թեժ կետերում, ինչպիսիք են Սարաևոն, Չեչնիան, Կամբոջան, Բիրման (կամ Մյանման) և Արևելյան Թիմորը: Նա 1999 թ. «People in Need» ՀԿ շրջանակում հիմնադրել է «One World» («Մեկ աշխարհ») մարդու իրավունքներին նվիրված փաստագրական ֆիլմերի ամենամյա փառատոնը, մասնակցել ֆիլմերի արտադրության գործում, ղեկավարել կրթական ծրագրեր: Իր իրավապաշտպան գործունեության համար բազմիցս արժանացել է մրցանակների: Այժմ հաստատված է Պրահայում և աշխատում է Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնում:

Այս տեքստը գրվել է 2013 թ. Իգոր Բլաժևիչի կողմից, որ այդ տարիներին աշխատում էր Բիրմայում: Այդ երկրում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները և ազգայնականության աճը նրան մղեցին Բիրմայի քաղաքացիական հանրության հետ կիսել սեփական դրամատիկ փորձը Հարավսլավիայի ոչ վաղ անցյալի դիպվածներից: Այս հոդվածը զգուշացնում էր Բիրմայում ժողովրդավարական ուժերին՝ չտրվել ազգայնականության ծայրահեղացումներին և միշտ հետևողական լինել իշխող հակադեմոկրատ վերնախավի շահը չսպասարկելու հարցում: Այս հոդվածը փլուզված, պատերազմներ և կոտորածներ վերապրած երկրի քաղաքացու մտահոգությունն է: Այն արժանի է դիտարկել առավել լայն համատեքստում՝ որպես ցանկացած իշխանություն-հասարակություն հարաբերության օրինակ: Այս հոդվածը ահազանգ է բոլոր հասարակություններին՝ ծայրահեղ ազգայնականությամբ քաղաքացիներին վերահսկելու ու մանիպուլացնելու իշխանության ձգտումի մասին:

Ծայրահեղ ազգայնականության արատավոր շրջանը

Նախորդ ամսվա վերջին կենտրոնական Բիրման ծածկած հակամուսուլմանական բռնությունների ալիքից հետո «88 Սերունդ» շարժման առաջնորդները հանդես եկան կարևոր հայտարարությամբ[1]: Մարտի 29-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ Մին Կո Նաինգն ասաց, որ «շատ հստակ էր», որ զանգվածային խռովությունները ոչ թե ներկայացնում էին բուդդիստների և մուսուլմանների միջև եղած համայնքային բախումը, այլ հրահրվել են «լավ պատրաստված ահաբեկիչների» կողմից:

Ես միևնույն ցավոտ դասը քաղեցի իմ հայրենի Բոսնիայում 90-ականների սկզբին: Էթնիկ զտումները երբեք չեն իրականացվում «ամբոխի» կամ ենթադրաբար իրար ատող հասարակ համայնքների ինքնաբուխ բռնությամբ: Դրանք սովորաբար լավ պատրաստված կիսառազմականացված խմբերի աշխատանք են՝ անվտանգության օրգանների կողմից կազմակերպված: Նրանց խնդիրն է կեղտոտ գործն անելը՝ առանց ցույց տալու իրենց կապը կանոնավոր զինված ուժերի, պաշտոնյաների և իրենց քաղաքական հովանավորների հետ:

Այն, ինչ կատարվեց նախկին Հարավսլավիայում, չի կարող մեխանիկորեն օգտագործվել բացատրելու համար այն, ինչ տեղի է ունենում Բիրմայում: Սակայն այն դերը, որ խաղացին կիսառազմականացված խմբերը («լավ պատրաստված ահաբեկիչները») նախկին Հարավսլավիայում, և այն, թե ինչպես էին նրանք փոխհարաբերվում կանոնավոր բանակի հետ, զգաստացնող նախազգուշացում է Բիրմայում բոլոր պատասխանատուների համար՝ անկախ նրանից, թե որտեղ են նրանք՝ կառավարությունում, պառլամենտում, ընդդիմությունում, մեդիայում, թե քաղաքացիական հասարակության ոլորտում:

Էթնիկ զտումները նյութատեխնիկական ապահովման և կազմակերպչական տեսանկյունից բարդ գործողություններ են, որոնք չեն կարող տեղի ունենալ առանց պետական օրգանների գոնե թե մի քանի տարրերի լուռ ներգրավվածության:

Ազգայնական մտավորականները, մոլեռանդ կրոնական առաջնորդները և «հայրենասեր» մեդիան նույնպես իրենց դերն են խաղում, սակայն հետավտորիտար պետության տեսանելի և անտեսանելի ուժային մարմինն է անբաժանելի համադերակատարը:

Ես չգիտեմ, թե ո՞վ է պատասխանատու Բիրմայում տեղի ունեցած սարսափելի դեպքերի համար, և չեմ կարող որևէ մեկին մատնանշել՝ հիմնվելով նախկին Հարավսլավիայի հետ տարված զուգահեռների վրա: Սակայն կան քաղված դասեր, որոնք որպես նախազգուշացումներ տեղին են:

Ազգայնականությունը՝ որպես ավտորիտարիզմի պաշտպանության վերջին հանգրվան

Ժողովրդավարացման պայմաններում լարված էթնիկ հարաբերությունները սովորաբար առաջինն են ջրի երես դուրս գալիս: Քաղաքական բացի պայմաններում ճնշված և խտրականությունների ենթարկված խմբերի բողոքները և պահանջները մակերևույթ են բարձրանում՝ դեպի մի բաց տարածք, որ բնորոշվում է բազմակուսակցական համակարգով, ազատ լրատվական դաշտով և հավաքների ազատությամբ: Այս պահանջներից և բողոքներից շատերը բորբոքում են կրակոտ ազգայնականությունը, ինչը կարող է մեծ ճնշում ստեղծել կազմավորվող ժողովրդավարական կառույցների վրա:

Սակայն կա մեկ այլ տիպի ազգայնականություն, որը շատ ավելի վտանգավոր է կազմավորվող ժողովրդավարությունների համար: Շատ տեղերում ազգայնականությունը երբեմն իր ծայրահեղ ձևով դարձավ նախկին ավտորիտար կառույցների վերջին հանգրվանը: Թույլ տվեք պատմել այն մասին, թե ինչպես Սլոբոդան Միլոշևիչն օգտագործեց ազգայնականությունը՝ երկարաձգելու համար կոմունիստական կուսակցության իշխանությունը, և թե որն էր գինը, որ վճարեցին նախկին Հարավսլավիայի ազգությունները:

Հարավսլավիան սովետական բլոկի մասը չէր, սակայն կոմունիստական երկիր էր: 1989-ին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում կոմունիզմի անկման պայմաններում, նույնիսկ Հարավսլավիայի համեմատաբար մեղմ կոմունիստական իշխանությունը այլևս չկարողացավ դիմակայել:

Կոմունիստական կուսակցություններն, ըստ էության, բախվեցին երկընտրանքի: Մեկը իրենց իշխանական դերից հրաժարվելն էր և սոցիալիստական կուսակցությունների փոխակերպվելը: Նրանք կարող էին ընդունել ժողովրդավա-

[1] *Հրատարակվում է՝ ըստ Blazevic, I. (2003 April 8) The Vicious Cycle of Extreme Nationalism. 2016.09.21 դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.irrawaddy.com/contributor/the-vicious-cycle-of-extreme-nationalism.html: Թարգմանության իրավունքը սիրով տրամադրել է հեղինակը: Բնագրից թարգմանեց Արաքսյա Հակոբյանը (ծնթ. խմբ.):*

ական մրցակցության կանոնները և կրել մեծ հավանականություն ունեցող պարտություն առաջին ազատ ընտրություններում: Սակայն դառնալով ընդդիմության մաս՝ նախկին բռնաճնշող կոմունիստական կուսակցությունները կարող էին մաքրել իրենց շարքերը և առաջ քաշել ավելի կոմպետենտ տեխնոկրատների և կառավարիչների: Իսկ այդ ընթացքում նոր կուսակցությունները, որ ընտրվել էին առաջին ազատ և արդար ընտրություններում, շուտով կհիասթափեցնեին իրենց ընտրողներին: Նախկին այլախոհները կապացուցեին, որ ավելի քան անկարող են, և առօրյա քաղաքականությունը կվարկաբեկեր նրանց ժողովրդականությունը: Այդ ժամանակ նախկին կոմունիստ, այժմ արդեն սոցիալիստական, ձախ կենտրոնամետ կուսակցությունները մեծ հնարավորություն կունենային հաղթելու ժողովրդավարական փոփոխությանը հաջորդած երկրորդ կամ երրորդ ընտրություններում: Եթե հետևենք նախկին կոմունիստական եվրոպական շատ երկրների անցումային հետագծերին, ապա սա հենց այն է, ինչ տեղի ունեցավ:

Մյուս տարբերակը, որ ուներ կոմունիստական կուսակցությունը, իշխանությանը կառչելն էր ամեն գնով: Դա հենց այն ուղին էր, որ ընտրեցին Սլոբոդան Միլոշևիչը և նրա սերբական կոմունիստական կուսակցությունը: Կոմունիզմը հօդս էր ցնդել և հեռացել, սակայն լավ կազմակերպված կուսակցական մեխանիզմը դեռ կար և վերահսկում էր տնտեսությունը և մեդիան, ինչպես նաև բանակը, ոստիկանությունը և գաղտնի ծառայությունները:

Գործարանների և գյուղացիական տնտեսությունների ղեկավարները, բանկերի կառավարիչները, առևտրային կազմակերպությունների ղեկավարները, հեռուստատեսության և ազգային ռադիոալիքների գլխավոր խմբագիրները և գործադիր տնօրենները, բանակի գեներալները, ոստիկանության պետերը, լրտեսները և գաղտնի ոստիկանության պաշտոնյաները, որոնք տասնամյակներ շարունակ հալածել էին ընդդիմության անդամներին, վախենում էին այն ամենից, ինչ փոփոխություն կբերեր իրենց համար: Միլոշևիչը առաջարկեց նրանց բոլորին գոյատևում և պաշտոնավարման շարունակություն իշխանությունում, ինչպես նաև «յուղոտ կտորներ» մասնավորեցման գործընթացից: Նրանք պատրաստ էին հետևել:

Նախկինում արտոնյալ միջին և բարձր դասակարգի կուսակցականների և տեխնոկրատների միայն ինքնապահպանման շահը, սակայն, բավարար չէր այնքան քվեներ հավաքելու համար, որ նրանք հաղթեին ազատ բազմակուսակցական ընտրություններում: «Օրգանը» դեռևս վերահսկում էր

պետական իշխանության բոլոր կարևոր գործիքները, սակայն այն չուներ գաղափարախոսություն կամ որևիցե դրական կերպար ընտրողներին առաջարկելու համար: Եվ ահա ամենահեշտ և ամենաարդյունավետ նոր գաղափարախոսությունը ազգայկանությունն էր:

Ազգայնականությունը՝ որպես ավտորիտարիզմի պաշտպանության վերջին հանգրվան

Նախագահի և իշխող կուսակցության ներքո մարդկանց միավորելու համար անհրաժեշտ էր ստեղծել վախի և զայրույթի մթնոլորտ: Մեդիան և հանրային տարածքը դեռևս վերահսկող նախկին ռեժիմի առաջին քայլը ազգայնական մտավորականներին և կրոնական առաջնորդներին դուրս թողնելն էր ստվերից, որտեղ նրանց պահում էին տասնամյակներ շարունակ: Անսպասելիորեն մարդիկ, որոնք նախկինում հալածվում էին իրենց ազգայնական և կրոնական հայացքների համար, սկսեցին հայտնվել հեռուստատեսությամբ, հանդես գալ հրապարակային ելույթներով, մասնակցել բանավեճերի և տպագրվել: Նրանք հիմնականում խոսում էին հին պատմական բողոքների մասին՝ ներառյալ այն բոլոր անարդարությունները և ոճիրները, որ «ուրիշները» գործել են «մեր» նկատմամբ:

Մթնոլորտը հասարակության մեջ սկսեց թեժանալ: Վերածնված ազգայնականության «մի կողմին» ի պատասխան՝ դրսևորվեց մյուս կողմի պատրաստակամությունը՝ արձագանքել ազգայնականության իր զգացումով: «Ուրիշները» նույնպես ունեին իրենց պատմություն(ներ)ը և սեփական բողոքները:
Նրանք ունեին իրենց սեփական գրողներն և մտավորականները, որոնք հավաքական հիշողություններ և ինքնություն էին խթանում: Նրանք ունեին նաև իրենց ձգտումներով լի քաղաքական գործիչները, որոնք նախապատրաստվում էին առաջին հետավտորիտար, «ժողովրդավարական» ընտրություններին: Նրանցից շատերը նախկին կոմունիստներ էին:

Հին անարդարություններն ու ոճիրները, որ գործել են «ուրիշները» «մեր» հանդեպ, և անցյալի փառքի մասին պատմությունները հաջողությամբ ոգևորեցին հանրությանը, քանի որ դրանք մեծ չափաքանակներով էին ներկայացվում նոր ու դինամիկ մասնավոր «ազատ» մեդիայի կողմից:

Հանրությունը բացարձակապես անպատրաստ էր այսպիսի գրոհի: Նրանք միայն սովոր էին հին տեսակի ձանձրալի սոցիալիստական պետական քարոզչությանը: Նոր մասնավոր մեդիան նրանց առաջարկում էր զվարճանքի, շոուբիզնեսի, բամբասանքների, դեղին էջերի մանիպուլատիվ հնարքների

և «հայրենասիրության» թղթով փաթեթավորված ճիշտ չափաբաժնով քաղաքական ուղերձների մի գրավիչ խառնուրդ: Ծայրահեղ ազգայնական կուսակցություններին նույնպես թույլ էր տրվում հայտնվել, իսկ դրանցից գոնե մի քանիսը ղեկավարում էին նախկին գաղտնի գործակալներ: Նրանց բորբոքված ելույթները ուղղակիորեն բարձրացրին մակարդակը նրա, ինչը թույլատրելի էր ասել: Ազգայնական դարձած կոմունիստները թույլ տվեցին, որ սկզբից հաչեն ավելի փոքր շները և թույլ տվեցին, որ նրանք հաչեն այնքան բարձր, ինչքան կարող էին: Տարբեր էթնիկ խմբերի միջև անվստահությունը սկսեց էլ ավելի աճել:

Բռնաբարության մութ դեպքը՝ որպես խթան

Ինչևիցե, այս ամենն էլ բավարար չէր լինի ընտրություններում հաղթելու համար: Անհրաժեշտ էր հին վերքերը տրորել նոր աղով: Հիմա պետք էր խթան հանդիսացող մի իրադարձություն, մի տգեղ միջադեպ: Հետո պետք էր բազմիցս հեռարձակել այդ տգեղ, զարհուրելի միջադեպի պատկերները մեդիայի միջոցով: Նույնիսկ սովորաբար զգուշավոր և ողջամիտ, զուսպ մարդիկ կուրացել էին՝ անտեսելով իրականությունը և պատրաստ էին կամավոր դառնալ ինքնապաշտպանության կամ բանակի ստորաբաժանումներում: Նրանք պատրաստ էին գնալ և սպանել ուրիշներին և կրակի տալ նրանց տները:

Սերբ գյուղաբնակ Ջորջե Մարտինովիչի ենթադրյալ բռնաբարության դեպքը մի այսպիսի խթան հանդիսացող միջադեպ էր, որ օգտագործվեց Միլոշևիչի ժողովրդականությունը ամրապնդելու և գրեթե ամողջ սերբ ազգն իր շուրջ մոբիլիզացնելու համար: Ենթադրվում էր, որ սերբ գյուղացուն առևանգել էին Կոսովոյի ալբանական արմատականները, որոնք էլ բռնաբարել էին նրան գարեջրի շշով: Ամբողջ պատմությունը բավականին մութ էր և առ այսօր ոչ ոք չգիտի, թե ինչ է իրականում կատարվել: Սակայն սերբ ազգայնականների և «հայրենասեր» մեդիայի համար կասկած չկար, որ հանցագործները ալբանացի էին, և որ սերբերը վտանգված էին:

Կոսովոյում Միլոշևիչի խտրականության քաղաքականության միջազգային քննադատությունը միայն օգնեց սերբերի մեծամասնության մեջ խորացնել այն զգացումը, որ իրենք սպառնալիքի տակ են՝ ներսից և դրսից թշնամիներով շրջապատված: Ցանկացած ոք, ով փորձում էր քննադատել Միլոշևիչի քաղաքականությունը կամ մրցակցել նրա հետ քաղաքական ասպարեզում, պարզապես որակվում էր «ազգի դավաճան»:

Տարբեր կարծիքների միջև ժողովրդավարական մրցակցությունը կամ ժողովրդավարական երկխոսությունը տեղ չուներ:

Մնացել էին միայն «նրանք» և «մենք»: «Մենք»-ը նշանակում էր բոլոր մարդիկ՝ անքննադատորեն միավորված երկրի առաջնորդների ետևում:

Բանակի և կիսառազմականացված խմբերի փոխլրացնող դերերը

Կանոնավոր բանակի և կիսառազմականացված խմբերի միջև փոխհարաբերությունը առանցքային դեր խաղաց էթնիկ զտումները իրականացնելու հարցում: Շատ օտարերկրյա դիտորդների համար ամենահետաքրքիր էր եզրակացնել, որ այն ահասարսուռ գործողությունները, որ բնորոշեցին եվրոպական պատմության այս դրվագը 20-րդ դարի վերջին, հնագույն ատելության արդյունք էին Բալկանյան «ցեղերի» միջև, որոնք միշտ կռվել և կոտորել են իրար: Սակայն էթնիկ զտումները, որ սկզբից փորձարկվեցին Խորվաթիայում, իսկ հետո զանգվածայնորեն կիրառվեցին Բոսնիայում և Կոսովոյում, բոլորովին էլ իռացիոնալ չէին: Ընդհակառակը, էթնիկ զտումները խիստ ռացիոնալ, պլանավորված և լավ կազմակերպված ջանքեր էին: Որպես թիրախ էին ընտրվել մյուս համայնքի նշանավոր անդամները, և ահարկու ոճրագործությունները իրականացվում էին հրապարակայնորեն, որպեսզի մնացած բոլորը զանգվածային կերպով փախուստի դիմեն: Տները այրում էին կամ գետնին հավասարեցնում, որպեսզի չմնար ոչ մի սեփականություն, որը հետագայում հնարավոր կլիներ ետ պահանջել: Կրոնական, մշակութային և պատմական բոլոր հուշարձանները պետք է փոշիացվեին՝ չթողնելով ոչ մի հետք, որ «ուրիշները» երբևէ ներկա են եղել մի տեղ, որը պետք է լինի մեր և միայն մեր տարածքը:

Կիսառազմականացված խմբերը լավ զինված և խիստ շարժունակ ստորաբաժանումներ էին, որ բաղկացած էին նախկին հետախուզության գործակալների, օտար վարձու բանակի նախկին զինվորների, բանտից ազատ արձակված հանցագործների, ֆուտբոլային երկրպագուների և գործազուրկ երիտասարդների տարրերից: Կիսառազմականացված խմբերին հաճախ միանում էր տեղացի խաժամուժը, որ պատրաստ էր մասնակցել սպանություններին, բռնաբարություններին և թալանին:

Բանակը նույնպես տեղաբաշխված էր, սակայն գոնե սկզբում այն չէր մասնակցում սպանություններին և հրկիզումներին: Այն տեղաբաշխված էր «անվտանգություն և պաշտպանություն ապահովելու», «իրավիճակը հանդարտեցնելու» համար, ինչպես նշվում էր: Իրականում, բանակի դերն էր վերահսկել ռազմավա-

ական կարևորության կետերը, ապահով պահել ճանապարհները և այլ կարևոր ենթակառուցվածքները, փակել անկոչ հյուրերի մուտքը, ինչպիսիք էին լրագրողները, ակտիվիստները կամ դիտորդները (կիսառազմականացված խմբերը ազատ էին տեղաշարժվել այնպես, ինչպես կցանկանային), չեզոքացնել թիրախային փոքրամասնություն հանդիսացող բնակչությանը զինելու կամ համակարգելու ցանկացած փորձ, կառավարել մարդկանց զանգվածային հոսքը և վերջապես ապահով պահել տարածքը, երբ արդեն այն «մաքրվել» էր «ուրիշներից»:

Քանի որ կիսառազմականացված խմբերը կատարում էին կեղտոտ գործը, ռազմական ուժերը, կառավարությունը և Միլոշևիչը միշտ կարող էին ասել միջազգային հանրությանը և տեղական լսարանին, որ իրենք պատասխանատու չէին, որ իրենք անում էին ամենը, ինչ կարող էին անել իրավիճակը հանդարտեցնելու համար: «Խնդիրները», նշում էին նրանք, առաջացրել էին տեղական ինքնապաշտպանության խմբերը, որոնք էլ հրահրվել էին ուրիշների հարձակումներից:

Մի որոշակի պահի այլևս անհրաժեշտ չէր հորինել պատմություններ բռնաբարությունների և սպանությունների մասին: Այսպիսի դեպքերը դարձան իրական և տեղի էին ունենում զանգվածայնորեն: «Մեր» ուժերը կատարում էին ահարկու ոճրագործություններ «ուրիշների» հանդեպ, սակայն «ուրիշները» չէին մնում պասիվ զոհեր: Նրանք նույնպես համակարգվում էին և հակահարված հասցնում «մեր» անպաշտպան քաղաքացիներին միևնույն ուժգնությամբ: Հայրենական «հայրենասեր» մեդիան երբեք չէր հաղորդում մեր սեփական կիսառազմականացված խմբերի և մեր սեփական հարբեցողների խաժամուժի կողմից իրականացված վայրագությունները: Սակայն «մեր» մեդիան միանգամից հաղորդում էր ուրիշների կողմից իրականացված հանցագործությունները: Սա ստեղծեց էլ ավելի շատ վախ և զայրույթ, ինչը նշանակում էր էլ ավելի շատ պատրաստակամություն՝ «պաշտպանելու» մեր վտանգված ազգը՝ սպանելով և վտարելով ուրիշներին:

Ահա թե ինչպես էր ազգայնականության արատավոր շրջանը պտտվում նախկին Հարավսլավիայում մեկ տասնամյակ շարունակ:

Միևնույն ժամանակ Միլոշևիչը և իր նոր «սոցիալիստական» կուսակցությունը առանց որևէ խնդրի հաղթեցին 1990-ի, 1992-ի և 1997-ի նախագահական և պառլամենտական ընտրություններում: Համարյա մեկ տասնամյակ շարունակ Միլոշևիչը ժողովրդականորեն ընտրված նախագահ էր: Նախկին կոմունիստների՝ Սերբիայում ևս 10 տարի իշխանության մնալու

գինը երկրի բաժանումն էր և չորս ագրեսիվ պատերազմները: Երկու հարյուր հազար մարդ կորցրեց կյանքը, հազարավոր գյուղեր հրդեհվեցին, քաղաքներ ռմբակոծվեցին ծանր հրետանիով, միլիոնավոր մարդիկ ենթարկվեցին էթնիկ զտումների՝ թողնելով իրենց հողը և տները, իսկ տնտեսությունը ամբողջովին քանդվեց:

Ի վերջո Միլոշևիչը տապալվեց ժողովրդական ապստամբության կողմից, որը առաջնորդում էին սերբ երիտասարդական շարժումը՝ «Օտպոր»-ը («Հակահարված»), և միացյալ ընդդիմությունը, որը խիստ արձագանքեց, երբ նա փորձեց կեղծել 2000-ի ընտրությունները: Նրան հանձնեցին Հաագայի միջազգային դատարան՝ պատերազմական հանցագործությունների և մարդկության հանդեպ գործած հանցանքների մեղադրանքով: Նա մահացավ իր բանտախցում սրտի կաթվածից՝ նախքան նրա դեմ հարուցված դատական գործը կհասներ եզրակացության:

Թյուրըմբռնումներից խուսափելու համար թույլ տվեք եզրակացնել, որ ես չեմ ցանկանում զուգահեռներ տանել Միլոշևիչի՝ Բալկանների մսագործի և նախագահ Թեյն Սեյնի միջև: Ինչ ցանկանում էի ասել այն է, որ էթնիկ զտումները երկնքից չեն ընկնում և տեղի չեն ունենում որպես համայնքային բռնության ինքնաբուխ ժայթքում: Էթնիկ զտումները (իսկ այն, ինչ կատարվում է Բիրմայում մուսուլման բնակչության հետ, ունի բոլոր բնութագրերը էթնիկ զտում կոչվելու համար) սովորաբար նախապես են պատրաստվում «պատերազմելու հոգեբանական ձևերի» միջոցով և չեն կարող տեղի ունենալ առանց առնվազն մի քանի պետական մարմնի տարրերի ներգրավվածության:

Ծայրահեղ ազգայնականության արատավոր շրջանը կոտրելու և վատթարը կանխելու համար (քանի դեռ ուշ չէ) Մին Քո Նաինգի և նրա «88 Սերունդ» շարժման գործընկերների պես քաղաքացիական հասարակության առաջնորդների համարձակ և պատասխանատու նախաձեռնությունները բավարար չեն: Քաղաքացիական հասարակությունը, հարգարժան անձինք, զուսպ կրոնական առաջնորդները, պատասխանատու մեդիան և ընդդիմությունը կարող են և պետք է օգնեն մերժել բռնությունը և հանդարտության կոչ անեն: Սակայն, վերջին հաշվով կառավարության և պետության պարտականությունն է թույլ չտալ, որ էթնիկ զտումներ տեղի ունենան իր տարածքում, և արագ ու որոշիչ գործողություններով կանգնեցնել բոլոր այն պետական և ոչ պետական ուժերին, որոնք այն հրահրում են: